



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Պետությունը՝ ազգային իդեալների իրագործման միջոց

Պետության գոյությունն ազգի հարատևման հիմնական երաշխիքներից է: Այդ առումով պետությունը չի կարող ինքնանպատակ լինել: Պետական համակարգի հիմնական առաքելությունը համապատասխան միջավայրի ստեղծումն է, որտեղ պետք է ապահովվի ազգի բնականոն զարգացման եւ բարգավաճման գործընթացը: Հայկական իրականության մեջ 30 տարի առաջ անկախ պետականության վերակերտման ակունքներում, ելնելով պետություն ունենալու հայության մեջ գոյություն ունեցող իդեալական երեւոյթից, պետության գոյությունը ոմանց մոտ դարձավ գերնպատակ:

Այդ երեւոյթը հատկապես դրսևորվեց Հայաստանի Հանրապետության Հռչակագրում տեղ գտած դրույթների կազմման օրերին, որտեղ ի վերջո հաղթեց պետության՝ ազգային գաղափարախոսության եւ իդեալների իրագործման կողմնակից թելը: Իսկ այդ գաղափարախոսության ընդդիմախոսները, որոնք հետագայում ենթարկվեցին օտարամուտ եւ ապագային հոսանքների ազդեցությանը, միշտ էլ եւ դեռ այսօր էլ հակադրում են հայկական պետության գոյությունը ազգային, հատկապես՝ Ղարաբաղյան եւ Տեղասպանության հիմնախնդիրներում:

Ըստ նրանց, Հայաստանը ժողովրդավարական «բաստիոն» դառնալով եւ տարածաշրջանում բարիդրացիական խաղաղության քարոզներով կա՛մ պիտի հաղթահարի հզոր պետություն դառնալու մարտահրավերը, կա՛մ էլ լինի ազգային հարցը, այդ թվում՝ Արցախյան հիմնահարցը, Տեղասպանությունը եւ Հայկական պահանջատիրությունը ներկայացնող պետություն, որի պարագայում հնարավոր չէ առաջինը՝ հզոր պետության գոյությունը:

Արցախյան վերջին պատերազմում կրած պարտությունից հետո՝ այժմ եւս մեծ թափով իրապարակ է նետվում նշված տեսությունը՝ այս անգամ այն ծառայեցնելով թուրքական շահերին: Ահա թե որտեղ է պետության գոյությունը դառնում ինքնանպատակ, ազգայինը դուրս է մղվում պետության օրակարգից, դառնում պահպանողական, հետադիմական գաղափարախոսություն: Իսկ ժողովրդավարություն, խաղաղություն, արդարություն «համեմունքները» դառնում են գերնպատակներ, որով փորձում են թունավորել ժողովրդի ուղեղը: Արդյո՞ք Թուրքիային ծառայող այս երեւոյթը նախօրոք ծրագրված գործընթաց չէ:

Սեպտեմբեր ամսում «Գաղափարական անկման շեմին» խորագրով խմբագրական այուևակում անդրադարձել էինք, թե ինչպես ապաշնորհության եւ անկարողության հետեւանքով պարտություն կրածները փորձում են մեղքը պարտակելու համար գաղափարական հենկետ գտնել ապագային գաղափարախոսության ջատագովների մոտ: Նույնը շարունակվում է այսօր: Արցախյան հարցը հայկական պետության ուսերից թողափելու քաղաքականության ջատագովներից մեկի՝ Ժիրայր Լիպարիտյանի ներկայությունը, ակտիվ հանդիպումները եւ ապագային սերմերի տարածումը այդ պարտության արդարացման միջոց է, իսկ հետագայում՝ պարտվողական մտածելակերպով թուրքերին հնազանդվելու քաղաքականության սկիզբ:

Ամեն կերպ պետք է խոչընդոտել, չթույլատրել ազգագաղափար մտայնության սերված գաղափարների ներթափանցումն Արցախ: Մենք դեռ պատերազմի մեջ ենք, այն չի ավարտվել, եւ գալու է այն օրը, որ հայ ժողովուրդը, եթե հարկ լինի, նաեւ զենքի ուժով տեր է կանգնելու իր իրավունքներին: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, պահանջատիրության կենտրոնը պետք է դառնա Արցախը, իսկ Արցախում տեր-պետության կազմավորման, լիպարիտյանական եւ նրանց հոգեզավակ փաշինյանական պարտվողական գաղափարների տարածումը համազոր է դասալքության:



## ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### 2022թ. պետական բյուջեն հետպատերազմյան իրողություններին չի համապատասխանում

Դեկտեմբերի 16-ին կայացել է Արցախի Ազգային ժողովի հերթական նիստը, որի օրակարգային հիմնական հարցը 2022թ. բյուջեի նախագիծն էր:

Սահմանված ժամկետացանկով Ազգային ժողովում ավարտվել է բյուջեի վերաբերյալ քննարկումների առաջին փուլը: Դեկտեմբերի 16-ի նիստում հանրագումարի են բերվել խմբակցությունների եւ պատգամավորների առաջարկները:

Այնուհետեւ բյուջեի վերաբերյալ ելույթով հանդես է եկել ԱՀ ֆինանսների նախարար Վահրամ Բաղդասարյանը, իսկ հարակից զեկույցներով՝ Պաշտպանության, անվտանգության եւ օրինապահականության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սեյրան Հայրապետյանը, Ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը:

Վահրամ Բաղդասարյանը շնորհակալություն է հայտնել բոլոր պատգամավորներին շահագրգիռ եւ բաց քննարկումների համար: Նա տեղեկացրել է, որ խմբակցությունների եւ առանձին պատգամավորների կողմից 2022թ. պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ներկայացվել են 93 առաջարկություններ եւ հարցադրումներ: Ստացված առաջարկությունների վերաբերյալ կառավարության տեսակետը ներկայացվել է Ազգային ժողով: «Եկամուտները ծրագրվել են 184 մլդ 300 մլն դրամ, ծախսերը նախատեսվում են 215 մլդ 681.9 մլն դրամի չափով, որը նախորդ տարվա համեմատ ավել է 63%-ով: Դեֆիցիտը կազմում է 31 մլդ 381.9 մլն դրամ, որը կֆինանսավորվի փոխառու միջոցների հաշվին», - իր ելույթում նշել է ԱՀ ֆինանսների նախարարը:

Մտքերի փոխանակությունից հետո բյուջեի քննարկումն ընդմիջվել է մինչեւ դեկտեմբերի 23-ը, որի ընթացքում պատգամավորները դարձյալ առաջարկություններ կներկայացնեն բյուջեի նախագծի վերաբերյալ:

«Ապարամ»-ի հետ զրույցում «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը նշել է, որ որպես երկրի հիմնական ֆինանսատնտեսական փաստաթուղթ՝ պետական բյուջեն պետք է արտահայտի քաղաքականությունը երկրի զարգացման տարբեր ոլորտներում, իսկ 2022թ. պետական բյուջեն հետպատերազմյան իրողություններին ընդհանուր առմամբ չի համապատասխանում:

«Պատերազմից հետո երկիրը կանգնած է մի շարք մարտահրավերների առաջ, որոնցից գլխավորներն են անվտանգությունը, կարգավիճակի հարցը եւ սոցիալական խնդիրները: Եթե երրորդի վերաբերյալ բյուջեում ինչ-որ լուծումներ տրված են, ապա առաջին երկուսի մասին նույն բանը ասել չի կարելի: Բյուջեի քննարկումները շարունակվում են, մենք մի շարք նոր առաջարկություններ ենք ներկայացնելու», - ասել է ՀՀ ԴՀ Խմբակցության ղեկավարը:

Մինչ Ազգային ժողովի լիագումար նիստը, դեկտեմբերի 4-ին գալիք տարվա գլխավոր ֆինանսական փաստաթուղթը քննարկվել է ԱՀ ԱԺ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցության հետ: Քննարկմանը ներկա էին խմբակցության անդամները, ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը եւ ԱՀ ֆինանսների նախարար Վահրամ Բաղդասարյանը:

ՀՀ ԴՀ Խմբակցության անդամները երեք տասնյակից ավելի հարցեր են ուղղել, որոնք հիմնականում վերաբերում էին բյուջեի միջոցներն ավելի արդուևավետ ու թափանցիկ օգտագործելուն, այն հնարավորիսս հետպատերազմյան իրողություններին մոտեցնելուն:

ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը նշել էր, որ բյուջեի նախագծի վրա դեռեւս աշխատելու են՝ հաշվի առնելով հնչած դիտարկումներն ու առաջարկները:

Տարեկիկ ԱՄԱԶՆԱՅՍ

### ՀՀ ԴՀ Դայ դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովը Արցախում



Երեւանում նոյեմբերի 29-ին մեկնարկած ՀՀ ԴՀ դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովը դեկտեմբերի 2-3-ին իր աշխատանքները շարունակել է Ստեփանակերտում: Խորհրդաժողովի աշխատանքները մինչ այդ գումարով էին նաեւ Գորիսում: Կարդացեք 4-րդ էջում

### Դաշնակցության ուշադրության կենտրոնում է սփյուռքում եւ հայրենիքում ապրող երիտասարդների միջեւ ամուր կապի ապահովումը



2021թ. նոյեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 5-ը ինձ եւ իմ ընկեր Բենոյին բախտ վիճակվեց այցելել Սիրիա, ծանոթանալ սիրահայ համայնքին եւ այնտեղ տարվող աշխատանքներին: Նախածնությունը ՀՀ ԴՀ գրասենյակին էր... Կարդացեք 7-րդ էջում

### Անկախ պետականությունը ՀՀ-ի համար բարձրագույն ու բացարձակ արժեք է. ՀՀ-ի Բյուրոյի ներկայացուցիչ

Հայ Յեղափոխական Ղազնակցությունը Հայաստանի, Արցախի և Սփյուռքի իր հաստատուն կառույցով, գաղափարական խոր ավանդով և աշխարհայացքով բոլորեց իր հիմնադրության 131-ամյակը: Այդ առիթով դեկտեմբերի 10-ին Բեյրութում տեղի է ունեցել տոնակատարություն, որի ընթացքում ելույթով հանդես է եկել ՀՀ-ի Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը:

«Մենք հայտարարել էինք, որ Արցախը մեր դարպասն է, այն պաշտպանության գիծն է, որ ոչ միայն պաշտպանում է Արցախը, այլև Հայաստանի սահմանները: Որքան ճիշտ դուրս եկավ այդ հանգամանքը. այսօր շատ ավելի մեծացել են այդ սահմանների պաշտպանության ու անվտանգության խնդիրները: Իսկ մեր թշնամիները, որոնց անորոշակները այսօր բորբոքված են Արցախի հանդեպ ունեցած իրենց «հաջողությունների» բերումով, թիրախավորել են նաև Հայաստանը, մանավանդ՝ Սյունյաց աշխարհը»,- ասել է նա:

Ըստ նրա, այսօր չի կարելի լուռ մնալ մեր համահայկական և հայրենի մարտահրավերների հանդեպ: «Մենք ընտել ենք մեր թեւերը և անցել շարունակական աշխատանքի՝ ինչպես պատերազմից առաջ, ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ պատերազմից անմիջապես հետո»,- նշել է Բյուրոյի ներկայացուցիչը:

Հ. Տեր Խաչատուրյանը նաև շեշտեց այն հանգամանքը, որ այսօր Հայաստանում զարգանում է ժողովրդային դիմադրության շարժում, և մեր հայրենակիցները վերսկսել են տարբեր ձևերով արտահայտել իրենց բողոքն ու դիմադրությունը, իսկ հայրենի ժողովրդի դժգոհության ալիքին արդեն միացել են Արցախն ու Սփյուռքը:

Նա ընդգծեց, որ այսօր արցախահայությունը թեև վիրավոր է, սակայն իր վերքերն ամոքելու, հայկական դիմագիծը պահպանելու, իր հանրապետությունը լիովին վերականգնելու և ամեն գնով Ադրբեյջանի գերիշխանության տակ վերադարձը բացառելու գործին է լծված: «Ամեն գնով պարտավոր ենք համախմբել Արցախի բոլոր հոսանքները և խորհրդարանական ուժերը, որպեսզի ԱՀ-ի վճռակամությունը պահպանվի, հայկական հողին խառնված արյունը տա իր արգասիքը և Արցախը շուտով վերագտնի իր նախկին աշխուժությունն ու սահմանները»,- նշել է Հ. Տեր-Խաչատուրյանը:

Հ. Տեր Խաչատուրյանը շեշտեց, որ անկախ պետականությունը ՀՀ-ի համար բարձրագույն ու բացարձակ արժեք է: «Հայությունն այսօր դեմ հանդիման է գտնվում նորագույն մարտահրավերների, որովհետև պարտված իշխանությունները հայրենի շահերը պաշտպանելու իրենց անկարողությունը փաստում են շարունակական նահանջով և ամեն տեսակ զիջումների պատրաստակամությամբ: Սփյուռքը եւս մեկ մարդու նման պիտի մասնակցի



հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, անխնայ պայքարի թուրք-ադրբեյջանական հայատյաց և պանթուրանական ճակատի դեմ: Դժվար պայքար է, բայց ոչ անկարելի: Ի վերջո, բոլորս գիտենք, որ ոչ ՀՀ-ն, ոչ հայ ժողովուրդը չեն վիստվել, երբ իրենցից ավելի մեծ թվով թշնամիների դեմ են պայքար մղել և կերտել մեծ հաղթանակներ»,- ընգծեց Հ. Տեր-Խաչատուրյանը:

### 30 տարվա ընթացքում արցախահայությունը հայրենի հողում ստեղծել է համամարդկային արժեքներով ապրող ինքնիշխան, իրավական և սոցիալական պետություն



Դեկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ: «Արցախի Հանրապետության Անկախության հանրաքվեի, մարդու հիմնարար իրավունքների և Սահմանադրության օրվա կապակցությամբ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, առաջ-

նորովելով միջազգային իրավունքի նորմերով՝ Արցախի ժողովուրդը համաժողովրդական հանրաքվեով վճռական «այո» ասաց արդեն հռչակված Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությանը:

Արցախի ժողովրդի այդ քայլը վերաթեւորեց հայի արժանապատվությունը և իր հայրենիքում ազատ ապրելու կամքն ու վճռակամությունը:

30 տարիների ընթացքում, որպես ժողովրդի կամքի դրսևորում, արցախահայությունը հայրենի հողում ստեղծել է համամարդկային արժեքներով ապրող ինքնիշխան, իրավական և սոցիալական պետություն:

Ադրբեյջանի մշտական սպառնալիքների ելքնամական վերաբերմունքի պայմաններում Արցախի Հանրապետության քայլերը նպատակաուղղված են տարածաշրջանում խաղաղության և

կայունության պահպանմանը:

Ադրբեյջանը, խախտելով ԵԱՀԿ Մինսկի խմբի և համախաղաղ պետությունների առջև ստանձնած ուժի և ուժի սպառնալիքի կիրառումից հրաժարվելու պարտավորությունը, 2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի և միջազգային ահաբեկչական կազմակերպությունների մասնակցությամբ լայնածավալ ռազմական գործողություններ է ձեռնարկել Արցախի Հանրապետության դեմ, որին զոհ են գնացել հազարավոր մեր հայրենակիցներ, բռնազավթվել է հանրապետության տարածքի մեծ մասը, ոչնչացվել նյութական և ազգային մշակութային ժառանգությունը:

Հետպատերազմյան ամիսներին Ադրբեյջանի հայատյացության, սադրիչ, ագրեսիվ հռետորաբանության և այդ ամենից բխող գործողությունների պայմաններում արցախահայությունը՝ հավատարիմ 1991թ. պատմական որոշումներին, հաղթահարելով դժվարությունները, կարողացավ իր ապագան:

Գլուխ ենք խոնարհում նահատակված բոլոր այն քաջորդիների առջև, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին հանուն Արցախի Հանրապետության և ար-

- ցախահայության ազատ ապրելու իրավունքի:
- Արցախի Հանրապետության և նրա ժողովրդի համար առաջնահերթ են մնում պետության միջազգային ճանաչման, բռնազավթված տարածքների ազատագրման, տեղահանված ազգաբնակչության հայրենադարձության, ռազմագերիների, պատանդների անվերապահ ազատման, հայկական ազգային մշակութային ժառանգության պաշտպանության հարցերը:
- Ի դեմս միջազգային հանրության՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համախաղաղ երկրներին կոչ ենք անում տեսանելի քայլեր ձեռնարկել արցախահայության՝ ազատ ապրելու իրավունքից բխող պահանջների իրագրման գործում:
- ԱՅ ԱԺ «Ազատ Հայրենիք-ԶՄ» խմբակցություն
- ԱՅ ԱԺ «Միասնական հայրենիք» խմբակցություն
- ԱՅ ԱԺ «Արդարություն» խմբակցություն
- ԱՅ ԱԺ «Հայ Յեղափոխական Ղազնակցություն» խմբակցություն
- ԱՅ ԱԺ «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն

### Փաշինյանի կառավարության համար Լեռնային Ղարաբաղի հիմնահարց այլևս գոյություն չունի

Դեկտեմբերի 10-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ ԱԺ-ում հայտարարեց. «...հայ հասարակության մեջ որոշակի քարոզչության արդյունքում կարծիք է ձևավորվել, որ «Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակ» ասվածը լեռնադրոմ է Ղարաբաղի անկախություն, միևնույն ժամանակ չկա»:

Միևնույն ժամանակ հայ հասարակությունը կարծես որբել կերպ ուշադրություն չդարձրեց այս հայտարարությանը, սակայն պետք է փաստել, որ սա թերեւս Արցախի ու արցախահայության ապագայի համար ամենավտանգավոր հայտարարությունն է, որը երբեք էլ հնչեցվել է ՀՀ իշխանությունների կողմից: Սա ոչ այլ ինչ է, քան Արցախը ամբողջությամբ Ադրբեյջանին հանձնված լինելու վերաբերյալ ինքնախոստովանական հայտարարություն և ՀՀ իշխանությունների կողմից Արցախից ամբողջությամբ ձեռքբերված վանալու պատրաստակամության հայտնում ու նշված գործընթացի սկիզբ:

Փաշինյանի կողմից այդ մտքերի արտահայտումը, այն էլ՝ ՀՀ Ազգային ժողովում, ուղղակիորեն մի քանի ենթատեքստ է պարունակում: Նախ, սա հստակ և ուղղակի մեսիջ է միջազգային հանրությանը: Ադրբեյջանի կողմից Արցախի նկատմամբ իրականացված վերջին ագրեսիայից հետո միակ բանը, որ միջազգային հանրության կողմից շեշտվել էր, Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցումն է: Կարող է կարծիք առաջանալ, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ միջազգային հանրության տարբեր մակարդակի հայտարարություններում, այդ թվում նաև՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների պաշտոնյաների կողմից, ինչպես Փաշինյանն է ասում, ամենեւին էլ չի նշանակում հայանպաստ լուծում կամ անկախություն,

բայց եթե այն դիտարկում ենք Ադրբեյջանի կողմից հնչվող հայտարարությունների համատեքստում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը լուծված լինելու և որբել կարգավիճակի մասին խոսք չլինելու վերաբերյալ, ապա պարզ է դառնում, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ հնչեցված հայտարարությունները միայն կարող է նշանակել մի բան՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ պետք է հստակ գիտակցել, որ Փաշինյանի կողմից հնչեցված հայտարարությունը նպատակ է հետապնդում՝ ասելու միջազգային հանրությանը, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարց այլևս գոյություն չունի Փաշինյանի կառավարության համար, այսինքն՝ Փաշինյանն ու նրա կառավարությունը նվազագույնը հայտարարում են ի լուր աշխարհի, որ այլևս հետաքրքրված չեն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ որբել ձևակերպմամբ, ու իրենց համար դա փակված թեմա է, իսկ առավելագույնը՝ համաձայնում են Ալիևի հետ, որ այլևս չկա Արցախի հարց, ու Ադրբեյջանն այն լուծել է իր օգտին, այսինքն՝ Ալիևը ճիշտ է, մենք՝ սխալ:

Այս հայտարարությամբ Փաշինյանը եւս մեկ նպատակ է հետապնդում՝ հանրությանը նախապատրաստում է Արցախը Ադրբեյջանի կազմում տեսնելու մտքին և հանրային քննարկման առարկա է դարձնում այն՝ բացելով օվերտոնի պատուհան: Ի դեպ, պետք է փաստել, որ Հայաստանի Հանրապետության որբել իշխանության կամ, ընդհանրապես, ՀՀ-ում որբել մեկի կողմից նման միտք երբեք էլ հնչեցվել է նմանօրինակ արտահայտություններ սովոր էինք լսել միայն ադրբեյջա-

նական կողմից:

Փաշինյանի հայտարարությունն իր մեջ պարունակում է եւս մեկ վտանգ. փաստացի Փաշինյանը արցախահայության կողմից իրացված ինքնորոշման իրավունքը և Արցախի պետականությունը դնում է կասկածի տակ, ավելին՝ այն համարելով ոչ օրինավոր և կեղծ:

Ի դեպ, վերը նշված ելույթից մեկ օր անց Նիկոլ Փաշինյանը Ֆեյսբուքյան բեռնաշրջանում է կատարել Արցախի հանձնման մեջ մեղադրելով «նախկիններին», ինչը կարող է առաջին հայացքից թվալ, որ նշված անձի կողմից պարզապես հերթական փորձն է իր մեղքը ուրիշների վրա բարդելու, բայց եթե կոմպլեքս ենք դիտարկում այն, մեղմ ասած՝ նմանվում է դատարանում մեղադրյալի ինքնապաշտպանական ճանի և ալիքի փնտրելուն:

Եվ այստեղ հարց է առաջանում՝ ի՞նչ գաղտնի փաստաթուղթ է ստորագրել Նիկոլ Փաշինյանը Նոյեմբերի 26-ին Սոչիում կամ դրանից առաջ, ի՞նչ գաղտնի պայմանավորվածություն է եկել Ալիևի հետ Արցախի վերաբերյալ, որից հետո հայ հանրությանը սկսել է նախապատրաստել Արցախն ամբողջությամբ Ադրբեյջանի կազմում տեսնելու մտքին և ուղղակի մեսիջներ հղելով Արցախի կարգավիճակի թեման փակված լինելու վերաբերյալ՝ փաստացի համաձայնելով Ալիևի հետ, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը լուծված է և փակված:

Արցախի շուրջ քաղաքական զարգացումներից վերջերս տեղի ունեցած եւս մեկ կարևոր հանգամանք դուրս է մնացել մեր հանրության ուշադրությունից: → 3

### Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Ռուստամ Ռաֆիկի Գասպարյան

Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Ռուստամ Ռաֆիկի Գասպարյանը ծնվել է 1961թ. ապրիլի 11-ին Խորհրդային Հայաստանի Արմավիրի մարզի, Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա համայնքում: Սովորել է հարազատ գյուղի միջնակարգ դպրոցում: 1966թ. ավարտել է Արմավիրի «Արարատ» համալսարանը՝ իրավագետի մասնագիտությամբ:

1979-1981թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1988 թվականից մասնակցել է Արցախյան շարժմանը, որից հետո հայրենի գյուղում հիմնել է «Սեւ հովազ» ջոկատը, ստանձնել ջոկատի հրամանատարի պաշտոնն ու մասնակցություն ունեցել Արցախի եւ Հայաստանի սահմանների պաշտպանությանն ու ազատագրությանը: «Սեւ հովազ»-ի մարտական ուղին սկսվել է Երասխի սահմանների պաշտպանությունից, շարունակվել Արցախի գրեթե բոլոր շրջանների ազատագրման մեջ ունեցած ավանդով:

1990թ. Գասպարյան եղբայրները գտնվում էին մարտադաշտում եւ արդեն կար պայմանավորվածություն, որ հունվար ամսին պետք է Ռուստամի հարսանիքը լիներ: Հարսանիքից 2 օր առաջ եղբայրները վիճում են, քանի որ Ռուստամը Սերոբին առաջարկում էր գնալ եւ իր փոխարեն ապագա կնոջը տուն բերել, մինչեւ որ մարտադաշտում կհանդարտվեր եւ ինքն էլ կկարողանար գնալ: Այսպես էլ ամուսնացավ Ռուստամը եւ ունեցավ 2 զավակ:

1994-2000թթ. ծառայել է ՀՀ ՁՈՒ-ում՝ զբաղեցնելով հրամանատարական տարբեր պաշտոններ:

2007թ. մայիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել թիվ 21 ընտրատեղամասից: 2012թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական կարգով «Արգավան Հայաստան» կուսակցությունից: 2017-ից հեռացել է ԲՀԿ կազմից:

Հեռանալով քաղաքական ասպարեզում աշխատելուց՝ Ռուստամ Գասպարյանն զբաղվում էր իր ջոկատով, հետեւում էր սահմաններում տիրող իրավիճակին՝ պատրաստ մեկ կրակոցի դեպքում անգամ հասնել դեպքի վայր: Նա հիմնադրեց «Սեւ հովազ» ռազմախորհրդակցական հասարակական կազմակերպությունը եւ ամեն ինչով աջակցում էր սահմանների ամրության ապահովմանը:

Ռուստամ Գասպարյանը, անձնակազմի մի կողմ թողած, միշտ եղել է հայրենիքի նվիրյալ զավակն ու անձնուրաց մարտիկը, ուստի ինչպես Արցախյան առաջին

ազատամարտի տարիներին, այնպես էլ 2020թ. 44-օրյա պատերազմի օրերին «Սեւ հովազ» ջոկատը Ռուստամ Գասպարյանի հրամանատարությամբ կրկին առաջնագծում էր:

Ռուստամը իր երկու զավակներին սովել է մարտիկներին վայել դաստիարակություն, եւ պատահական չէր, որ հայր ու որդի միասին են մեկնել ռազմաճակատ:



Սեպտեմբերի 28-ից Շահումյանում, այնուհետեւ՝ հոկտեմբերի 11-ից Հաղորթում ջոկատի քաջարի մարտիկներն անշեղորեն կատարում էին իրենց առջեւ դրված մարտական խնդիրները, ետ մղում թշնամու հուժկու հարձակումները:

Ռուստամ Գասպարյանի եղբայրը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ «Սեւ հովազ» ջոկատը պատերազմի հենց առաջին օրվանից համոզված էր, որ հայկական կողմը մեկ սանտիմետր անգամ չի զիջելու, սակայն ստեղծված անկառավարելի եւ խառնաշփոթ իրավիճակը, հայկական գյուղերի ու քաղաքների տարիանումներն իրենց հուշում էին, որ այդ տարածքներն ի վերջո զիջվելու են:

«90-ականների պատերազմի տարիներին անգամ երեխաները չէին լքում տները, իսկ այս անգամ բոլորը լքեցին իրենց տները, մի մասը՝ կազմակերպված տարահանման արդյունքում, մի մասն էլ՝ խուճապահար», - նշում է Սերոբ Գասպարյանը:

Սերոբ Գասպարյանի խոսքով՝ պատերազմի ընթացքում Ռուստամը միշտ առաջնորդել է ջոկատին եւ միշտ քայլել է ջոկատի առջեւից:

«Երբ մի անգամ պայթյուն եղավ, Ռուստամը, վերցնելով զենքը, վազեց դեպի

դեպքի վայր՝ ասելով, որ ոչ ոք իր հետեւից չգնա: Ինքը միշտ առաջինն էր, ու իր հետ դիրքում գտնվող զինվորները տեսնում էին սա, ոգեւորվում: Եթե հրամանատարը գնում է առջեւից, իրենք ինչո՞ւ պիտի չգնան», - հիշում է Սերոբ Գասպարյանը:

2020թ. Արցախյան պատերազմի ժամանակ ադրբեջանական ՁՈՒ-ի կողմից կիրառված ԱՅՍ-ից հարված է հասցվել

Ռուստամ Գասպարյանի մեքենային, որի հետեւանքով նրա 29-ամյա որդին՝ Ռաֆիկ Գասպարյանը տեղում մահացել է, իսկ ինքը՝ գլխի շրջանում ստացել բազմաբեկորային վնասվածքներ: Հոկտեմբերի 16-ին Ռուստամ Գասպարյանին վիրահատել են Ստեփանակերտում, այնուհետեւ տեղափոխել Գորիսի ԲԿ, ապա՝ «Էրեբունի ԲԿ»: Հոկտեմբերի 17-ին հայտնվում է Ռուստամ Գասպարյանի մահվան մասին գույժը:

«Տեղի ունեցածը միանշանակ դավադրություն էր, որովհետեւ Ռուստամն այն տեսակն էր, որ ոչ մի քայլ հետ չէր քայլելու, ու դեպքից 3 օր հետո այդ տարածքները եւս հանձնվեցին: Արցախի ողջ էլիտան եւս գիտակցում էր, որ եթե Ռուստամի հետ այդ չարաբաստիկ պատահարը տեղի չունենար, պատերազմի ելքը կարող էր այլ լիներ այդ տարածքում», - նշում է Սերոբ Գասպարյանը:

Ռուստամ Գասպարյանը տարիներ ի վեր հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով, ԱՀ Արիության մեդալով, ինչպես նաեւ՝ ՊՆ, ԵԿՄ բազմաթիվ հուշամեդալներով: 2011թ. սեպտեմբերին պարգևատրվել է Մխիթար Գոշի մեդալով, իսկ 2020թ. դեկտեմբերի 5-ին հետմահու պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով:

Սերոբ Գասպարյանի խոսքով՝ պատերազմի դաշտում թշնամու անօդաչուներն այդքան սարսափելի չէին, որքան որ թիկունքից դավաճանությունը, չապահովվող օգնությունն ու համալրումը: «Մենք գիտեինք, որ պատերազմ է, պետք է

առաջ գնանք, բայց մեր հետեւից ոչ ոք չի գալու, չեն բերելու: Սա նպաստում էր հետնահանջին: Ոչ մի տեղ, ոչ մի անգամ հարձակման հրաման չի եղել», - ասում է նա:

«Մեր այդքան զոհերն ու գերիները հենց հետնահանջի արդյունքն էին: Տեղանքին անծանոթ՝ 2-3 ամսվա զինծառայողները մոլորվում, գերի էին ընկնում կամ զոհվում: Խնդիրը սրա մեջ է, ու այսօր, եթե ասում են, որ գերիներն են մեղավոր, թող նախ հետ բերեն նրանց, հետո պարզեն՝ մեղավոր են, թե իրենց հանձնել են: Հաղորդեցիք հետ քաշվեցին, սակայն ջոկատներ կային, որ դեռեւս չգիտեին այս մասին ու շարունակում էին անտառում կռիվներ մղել: Սա ի՞նչ է, եթե ոչ միտումնավոր կոտորած», - նշում է Սերոբ Գասպարյանը:

Ըստ նրա՝ ստեղծված իրավիճակում միակ ելքը ազգովի զինվորագրումն է:

«Ազգովի զինվոր պետք է դառնանք, երեխայից մինչեւ ծեր՝ հայրենիքի իրական նվիրյալները պետք է առաջնորդեն մեզ: Բացի այդ, պետք է փոխվի կառավարման մոդելը, որպեսզի միանձնյա ոչ ոք չկարողանա որոշումներ կայացնել: Մի քիչ իրական կառավարման մոդելին պետք է նմանվի, որպեսզի նախագահը կարելուրագույն հարցերը առանց հոգեւոր խորհրդի չկարողանա իրագործել, այսինքն՝ Ն. Փաշինյանի նման չասի՝ ես եմ ասել՝ Սյունիքից զորքերը հետ քաշեք», - նշում է նա:

Անդրադառնալով 44-օրյա պատերազմում կորցրած տարածքները ետ բերելուն, Սերոբ Գասպարյանն ասաց, որ նախ պետք է մեր ներքին թուրքին հաղթենք, հզորանանք:

«Եռաբլուրում պառկած տղաների արյամբ է զծված սահմանը, ու եթե մեկը փորձի տորթել կամ հանձնել, նա ազգի դավաճան է», - ասել էր հրամանատար Ռուստամը եւ դարձել այն երանիներից մեկը, որ չտեսավ հզոր Արցախի անկումը:

Սերոբ Գասպարյանը մեզ հետ զրույցում նշեց նաեւ, որ 2021թ. նոյեմբերի 16-ին Սյունիքի հարցը վճռված էր, սակայն «Սեւ հովազ» ջոկատը մինչեւ վերջ կանգնեց ու շարունակեց թշնամուն, կանխելով նրանց առաջնադաշտում դեպի Սիսիան - Գորիս-Կապան ճանապարհահատված:

«Ցանկացած պահի «Սեւ հովազ»-ները պատրաստ են նորից խափանելու նմանատիպ բոլոր դավադրությունները եւ կռվելու մինչեւ վերջին շունչը՝ հանուն մեր հայրենիքի ու հավատի», - վստահեցնում է նա:

Վահագն ԽԱՉՈՒՅԱՆ

### Փաշինյանի կառավարության համար Լեռնային Ղարաբաղի հիմնահարց այլեւս գոյություն չունի

2 ← ԵԿԿ Մինսկի խմբի տարածած վերջին հայտարարությունում նշվում է հետևյալ ձեռնարկում. «...իրենց մանդատի շրջանակներում շարունակական ջանքերը, որոնք պետք է օգնեն կողմերին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված կամ դրանից բխող մնացած բոլոր հարցերում համապարփակ լուծում գտնելու համար»: Ձեզ տարօրինակ չի՞ թվում նման ձեռնարկում, ուշադրություն եք դարձնել «Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված կամ դրանից բխող մնացած բոլոր հարցեր» ձեռնարկում: Այսինքն՝ նշանակում է, որ փաստացի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը կողմերը համարում են լուծված եւ այժմ խոսում են այդ հակամարտության հետ կապված եւ դրանից բխող հարցերի մասին: Խնդիրն է՛լ ավելի է խորանում, երբ նկատում ենք, որ ԵԿԿ Մինսկի խմբի վերջին հայտարարություններում բացակայում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ որեւէ հիշատակում:

Այս ամենի համատեքստում ցանկանում եմ նաեւ ձեր ուշադրությունը հրավիրել Նիկոլ Փաշինյանի վերջին ատուլիսի ժամանակ հնչեցված, ավելի ճիշտ՝ չինչեցված ձեռնարկում: Եթե նկատել եք, Արցախը Ադրբեջանի կազմում ճանաչելու եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու պատրաստակամության վերաբերյալ հնչեցված հարցերին Փաշինյանը ոչ միայն հստակ ժխտողական պատասխան չտվեց, այլեւ փորձեց մանիպուլյացիաներով հարցը շեղել, ու այդ համատեքստում՝ նաեւ հնչեցրեց մտքեր երեսունամյա մեր պայքարից հրաժարվելու վերաբերյալ: Արցախի հիմնահարցի վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի կողմից վերջերս հնչեցված եւս մեկ վտանգավոր արտահայտության վրա եմ ցանկանում ձեր ուշադրությունը հրավիրել: Նույն Ազգային ժողովի ամբիոնից Փաշինյանն ասաց, որ միջազգային հանրությունը մեզնից ակնկալում է Արցախի հիմնահարցի լուծում, այլ ոչ թե Արցախի հարցի հայանպաստ լուծում, այսինքն՝ չի կարող լինել Արցախի հարցի հայանպաստ կամ ադրբեջանական պատասխանում: Փաստացի, Փաշինյանը խոստովանեց, որ Արցախի հիմնահարցը չի կարող հայանպաստ լուծում ունենալ, իսկ հայանպաստ միակ լուծումը դա արցախահայություն ինքնորոշման իրավունքի ճանաչումն է: Այդ դեպքում արդարացի հարց է առաջանում. եթե բանակցություններում Փաշինյանի կառավարությունը չի գնում Արցախի հարցի հայանպաստ լուծման, ապա ինչի՞ շուրջ են բանակցում: Ընդհանրապես բանակցությունները նրա համար են, որպեսզի կողմերը բանակցությունների միջոցով իրենց համար նպաստավոր պայմանների հասնեն, իսկ Փաշինյանի հայտարարությունն ապացուցում է, որ ոչ միայն Արցախի հարցի շուրջ բանակցություններ չկան, այլեւ Արցախի հարցի որեւէ հայանպաստ լուծման իր կառավարությունը չի գնում: Եթե այս համատեքստում դիտարկենք Արցախի հարցի լուծված լինելու վերաբերյալ Ալիեւի հայտնի պնդումները, ապա Արցախի հարցի՝ Ադրբեջանի օգտին լուծված լինելու պնդումներն ընդունելի են նաեւ Փաշինյանի ու նրա կառավարության համար:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները եւ փաստերը՝ պետք է ընդգծենք, որ Նիկոլ Փաշինյանի ու նրա կառավարության կողմից Արցախի հիմնահարցի հիմնովին փակման եւ այն Ադրբեջանի օգտին լուծված լինելու պրոպագանդան եւս ակնառու է լինում, այսինքն՝

Արցախն ամբողջությամբ եւ վերջնականապես Ադրբեջանին հանձնելու գործընթաց է սկսել Փաշինյանի վարչակարգը: Առավել տարակուսելի է, որ այս հանգամանքները լուր ընդունվում են հայ հանրության կողմից: Նույնիսկ ընդդիմադիր շրջանակներից որեւէ կերպ չի բարձրաձայնվում:

Առավել եւս անհավանալի ու տարակուսելի է, որ Արցախի իշխանությունները, ի դեմս նախագահի եւ ԱԳՆ-ի, լուր են, քանի որ փաստացի մենք ակնառու ենք լինում Արցախն ամբողջությամբ եւ վերջնականապես Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի եւ նրա կառավարության պատրաստակամությանը: Արդյո՞ք Արցախի իշխանություններն ու նախագահը տեղյակ են այս ամենի մասին ու գիտակցում են, թե ինչ գործընթացներ են կատարվում ՀՀ իշխանություններում Արցախի հարցի վերաբերյալ: Արայիկ Հարությունյանը որեւէ հարցում չի՞ արել Նիկոլ Փաշինյանից Արցախի վերաբերյալ վերջինիս կողմից հնչեցված վտանգավոր մտքերի մասին: Արդյո՞ք Արցախի նախագահին չի մտահոգում Արցախը Ադրբեջանին վերջնականապես հանձնելու պատրաստակամության մասին Նիկոլ Փաշինյանի ուղղակի եւ անուղղակի հնչեցված արտահայտությունները: Իսկ միգրացիոն հասարակական կազմակերպություններով հավաքվել, եւս մեկ բաց նամակ գրեն՝ այս անգամ Նիկոլ Փաշինյանին, ու վերջինից հարցնեն, թե արդյո՞ք իր հնչեցրած մտքերը փաստացի հանձնառություն է Արցախի պետականության ոչնչացման եւ պատրաստակամության հայտնելի՞ Ադրբեջանին՝ Արցախն ամբողջությամբ Ադրբեջանի իրավագործությանը հանձնելու վերաբերյալ:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՀՀ Գ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովը Արցախում

Երեւանում նոյեմբերի 29-ին մեկնարկած ՀՀ Գ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովը դեկտեմբերի 2-3-ին իր աշխատանքները շարունակել է Ստեփանակերտում: Խորհրդաժողովի աշխատանքները մինչ այդ գումարվել էին Նաեւ Գորիսում:

Հայ դատի ավելի քան 20 հանձնախմբերից եւ գրասենյակներից, ինչպէս նաեւ ՀՀ Կուսակցական մարմիններից ժամանած մոտ 50 ներկայացուցիչները Ստեփանակերտում նախ այցելեցին Եղբայրական գերեզմանոց՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արցախյան պատերազմների զոհերի հիշատակին:

Դեկտեմբերի 2-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում խորհրդաժողովի մասնակիցները հանդիպում ունեցան ԱԶ ԱԺ Նախագահի, խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ղեկավարների, պատգամավորների, ԱԶ մարդու իրավունքների պաշտպանի, ԱԶ արտաքին գործերի նախարարի, ԱԶ Անվտանգության խորհրդի քարտուղարի հետ: Զրավարները նախ հանդես եկան ողջույնի խոսքով, տեղեկություններ հաղորդեցին իրենց ոլորտների մասին եւ պատասխանեցին մասնակիցների հարցերին:

ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը խոսել է խորհրդաժողովի աշխատանքների հիմնական ուղղությունների մասին: Նրա խոսքով՝ հետպատերազմյան շրջանում կա ընդհանուր ընկճվածություն: Այդ ընկճվածությունը եւ հայրենի գանգվածների մոտ է, եւ՝ զգալի է հատկապէս Սփյուռքի պարագայում:

«Մեզ համար ընդունելի չէ այս երեւոյթը, եւ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Հայ դատի կառույցները մեր բոլոր շարքերով ու համակիրներով աշխատելու ենք, որպէսզի դուրս գանք այդ հոգեբանական ընկճվածությունից: Մեզ համար այդ էջը փակված է: Հիմա ժամանակն է հավելյալ թափով աշխատանքներին լծվելու եւ առաջ գնալու մեր չորս հիմնական նպատակների ուղղությամբ»,- նշել է նա:

Այդ չորս նպատակներից առաջինը, ըստ ՀՀ Բյուրոյի ներկայացուցչի, մեր հայրենիքի իրազեկման խնդիրն է, լրբքիսզի հարցը, Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդման եւ միջազգային հեղինակության բարձրացման խնդիրը: Երկրորդը՝ Արցախի անկախության ճանաչման եւ ինքնորոշման իրավունքի շեշտավորման խնդիրն է, նաեւ՝ Արցախի օժանդակության ծրագիրը: Երրորդը՝ Հայ դատի դասական օրակարգն է՝ Յեղասպանության ճանաչման, հետեւանքների վերացման եւ պահանջատիրության իմաստով: Չորրորդը՝ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության խնդիրն է: Հակոբ Տեր-Խաչատուրյանը կարեւորել է նաեւ մեր երիտասարդության քաղաքականացման խնդիրը:

Նա նկատել է, որ թշնամին հսկայական միջոցներ է օգտագործում, որի դեմ մենք ունենք մեր բանակը. «Հայ դատի ընկերներն ու ընկերուհիները ներկայացնում են հայ ժողովրդի երկրորդ բանակը: Եթէ առաջինը մեր ժողովրդի ֆիզիկական պաշտպանությունն է ապահովում, Հայ դատի բանակը նրա թիկունքն է, որ քաղաքական, դիվանագիտական եւ արտաքին հարաբերությունների ոլորտում նույնքան մեծ պատերազմի մեջ է աշխարհով մեկ»:

ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիյանը, ողջունելով խորհրդաժողովի գումարումն Արցախում, նշել է, որ Հայ դատի նվիրյալների գործը կրկնակի, եռակի դժվարացել է, որովհետեւ՝ եթէ նախկինում թե՛ ՀՀ, թե՛ ԱԶ արտգործնախարարությունները եւ Հայ դատի հանձնախմբերն աշխատում էին միասին, ձեռք-ձեռքի տված, ապա հիմա իրավիճակն այդպիսին չէ:

«Շատ անգամ պետական տեսակետը եւ մեր ազգային նպատակները չեն համընկնում: Ինչ վերաբերում է Արցախին, Արցախի եւ ՀՀ արտգործնախարարությունների միջեւ խզում կա: Դուք պետք է իրականությունն իմանաք: Ցանկացած հիվանդությունն հնարավոր է բուժել միայն այն դեպքում, եթէ ճիշտ փստորոշում ես անում: Դրսի խրամատը պիտի պահեք, մինչեւ մենք ներսում եղածը մաքրենք, հակահայկական տարրերից կարողանանք ազատվել: Այն ժամանակ մենք միասին հաղթանակներ կտունենք: Մինչեւ այդ պիտի մաքրառենք, պայքարենք՝ ինչքան հնարավոր է»,- ասել է Արթուր Մոսիյանը:

ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցչի խոսքով՝ խորհրդաժողովը լավագույն հարթակն է Արցախի ներկայացուցչությունների եւ Հայ դատի հանձնախմբերի համագործակցության հարցը բարձրացնելու, այդ առումով՝ ԱԶ ԱԳՆ ակնկալիքները հասկանալու համար:

ԱԶ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանն իր ելույթի սկզբում հիշեց այն օրը, երբ Արցախի կուսակցությունները, Արցախի ժողովուրդը նշում էին ՀՀ 125-

ամյակը: «Ելույթ ունեցողներից մեկն այն միտքն էր արտահայտել, թէ ՀՀ-ն առանց օրակարգի կուսակցություն է, եւ ես իմ ելույթի ժամանակ հակադարձեցի՝ ո՛չ, համամիտ չեմ. ՀՀ-ն 130 տարուց ավել է՝ առաջնորդվում է օրակարգով, այն է՝ Հայոց ցեղասպանության ճանաչում, Արցախի դատ, անվտանգության հարցեր: Այդ օրակարգը դուք եք վառ պահել»,- ասել է նա:

«Մենք կորցրել ենք մեր հայրենիքի 3/4-ը, բայց ամուր ենք կանգնելու մնացած մեկ քառորդի վրա եւ բարձրացնելու ենք մեր ձայնը՝ Շուշին, Հադրութը, Զարվաճառը, Շահումյանը, Գետաշենը պետք է ազատագրվեն: Դրանք մեր հողերն են: Մենք առանձին-առանձին թույլ ենք: Մենք միավոր կկազմենք, համազգային օրակարգ կստեղծենք, եթէ Արցախ-Հայաստան-Սփյուռք միատեսակ օրակարգով շարժվենք, համոզված եմ՝ հաղթանակներ կգրանցենք»,- ասել է Արթուր Թովմասյանը:

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Կրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը ՀՀ Գ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների խորհրդաժողովին խոսել է ծանր ժամանակներ ապրող հայ ժողովրդի, մասնավորապես՝ արցախահայության առաջ ծառայած մարտահրավերների մասին:

«Հետագարձ հայացք ձգելով անցյալին՝ կարելու ենք համարում արձանագրել այն փաստը, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կազմավորվել է պատմական այնպիսի մի ժամանակաշրջանում (1890թ.), որը բազմա-



թիվ ասպեկտներով նման է մերօրյա իրավիճակին, եւ կարծես թէ նորից կարիք կա լծվելու գործին այն նույն վճռականությամբ, ինչ վճռականությամբ եւ տեսիլքով Չորյան-Չավարյան-Միքայելյան եռյակը սկիզբ դրեց մեզանում առավել հայտնի Դաշնակցության այս վաստակյալ կառույցին: Միավրած չենք լինի, եթէ ՀՀ բազմաբովանդակ եւ ազգանվեր ծառայությունների ծիրից ներս առաջին հանրապետության հռչակումից հետո հաջորդ կարեւորագույն ձեռքբերումը համարենք Հայ դատի հանձնախմբի ձեւավորումն ու գործունեությունը: 1944 թվականից սկսյալ՝ այս կառույցը դարձավ Սփյուռքում գործող այն առաջամարտիկը, որ հայոց արդար դատը՝ հայ ժողովրդի պատմական հայրենիքում ազատ ապրելու իրավունքը, առ այսօր բարձրաձայնում է միջազգային տարբեր հարթակներում»,- իր ողջույնի խոսքում նշել է Արցախի թեմի առաջնորդը:

Կարելու էր համահայկական նշանակության հարցերում Հայ դատի գրասենյակների աշխատանքը, նա կանգ է առել Արցախի օկուպացված տարածքներում Արցախյան կատարած ոճրագործությունների վրա. «2020թ. 44-օրյա պատերազմի հետեւանքով Արցախի թեմի 161 վանքեր եւ եկեղեցիներ, 591 խաչքարեր, 345 տապանաքարեր եւ մակագրված քարեր, 108 գերեզմանատներ եւ սրբավայրեր, 43 բերդեր, ամրոցներ եւ պալատներ, 208 այլ հուշակոթողներ անցել են Արցախյան հսկողության տակ, եւ ասել, որ դրանց վտանգ է սպառնում, նշանակում է՝ ոչինչ չասել: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է մշակել համապատասխան համակարգված քաղաքականություն՝ այդ ամենը ներկայացնելու համապատասխան կառույցներին՝ գործնական քայլերի ակնկալիքով, եւ այս հարցում մեծ դերակատարում կարող է ունենալ Հայ դատի հանձնախմբը: Այսօր նորից վտանգված է հայի ինքնությունը, հավատքն ու մշակույթը, իսկ թշնամին նույնն է՝ ինչ որ այն ժամանակ»:

Կրթանես Եպ. Աբրահամյանն իր խոսքն ավարտել է ակնառու ազգային-եկեղեցական գործիչ, Հայոց կաթողիկոս Ներսէս Շնորհալու խոսքերով. «Ազատություն՝ երկրորդական բաներում, միություն՝ կարելու բաներում,

Սեր՝ ամեն ինչում»:

Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը խորհրդաժողովի ժամանակ ներկայացրել է 2020 թվականի աղբյուրաբանական ազդեցիկ ընթացքում եւ դրանից հետո ՄԻՊ հաստատության իրականացրած փաստաթղթերի եւ գրասենյակների կարեւորագույն դերը աղբյուրաբանական հանցագործությունների վերաբերյալ տարբեր երկրների ղեկավար շրջանակներին, միջազգային կառույցներին եւ իրավապաշտպան համայնքին իրազեկելու լայնածավալ աշխատանքների հարցում:

Պաշտպանը նշել է, որ իր կատարած առաքելությամբ ՀՀ Գ Դատի հանձնախմբերն ու գրասենյակները կարեւորագույն գործընկեր են Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համար:

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանն անդրադարձել է Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններին, տարաձայնաշրջանային զարգացումներին, աղբյուրաբան-դարաբանային հակամարտության կարգավորման գործընթացին:

Որպէս ԱԶ արտաքին քաղաքական առաջնահերթություններ՝ Դավիթ Բաբայանն առանձնացրել է հանրապետության միջազգային ճանաչումը, Արցախի Հանրապետության տարածքների դեֆոկուպացիան, աղբյուրաբան-դարաբանային հակամարտության համապարփակ եւ արդարացի կարգավորումը, տարբեր երկրների եւ նրանց սուբյեկտների հետ հարաբերությունների զարգացումն ու ընդլայնումը:

Նախարարը շեշտել է, որ Արցախի ժողովրդի եւ իշխանությունների համար անընդունելի է Աղբյուրաբանական կազմում որեւէ կարգավիճակ, ինչը կնշանակի Արցախի եւ հայոց պետականության կործանում:

Դ. Բաբայանը բարձր է գնահատել Հայ Դատի գրասենյակների կողմից իրականացվող աշխատանքները, կառույցի ներդրումն Արցախի զարգացման եւ գորգման գործում: Նախարարը երախտագիտություն է հայտնել հայրենանվեր աշխատանքի համար՝ հույս հայտնելով, որ ՀՀ Գ Դատը նույն եռանդով եւ նվիրվածությամբ կշարունակի իր աշխատանքը, եւ արցախակենտրոնությունը կմնա նրա գործունեության հիմնասյուններից մեկը:

Խորհրդաժողովի ժամանակ ելույթով հանդես են եկել նաեւ «Արցախի ժողովրդավարական կուսակցության» նախագահ Աշոտ Ղուլյանը եւ Արցախի «Արդարություն» կուսակցության համանախագահ Հակոբ Հակոբյանը:

Աշոտ Ղուլյանը կարեւորել է Արցախի հարցում միասնական դիրքորոշման որդեգրումը: «Պայքարի առաջնագծում բոլոր նախորդ տարիներին միշտ էլ զգացվել է Հայ դատի հանձնախմբերի եւ գրասենյակների գործունեությունը: Մեր վիճակում գտնվող երկրների համար այսօր շատ կարեւոր երկու ուղղություն կա, որի շուրջ մենք անպայման պետք է կարողանանք իրար հավաքել եւ տարբեր գաղափարներով սնուցել. դա անվտանգությունն է եւ դիվանագիտությունը, դա բանակն է եւ արտաքին կապերը: Ծիշտ հաշվարկված եւ համաձայնեցված ծրագրերը կօգնեն իրար գումարել ազգի ներուժը: Շատ կարեւոր է, որ այն համազգային ուժը, որը մենք ունենք՝ ի դեմս Հայ դատի գրասենյակների եւ հանձնախմբերի, կրկնապատկեն իրենց գործունեությունը: Այնպէս որ, սպասումները ձեզնից ավելի շատ են, քան եղել են նախկինում»,- ասել է Աշոտ Ղուլյանը:

Հակոբ Հակոբյանի խոսքով՝ տասնամյակներ շարունակ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, իր աշխարհասփյուռ կառույցները, Հայ դատի գրասենյակներն անգնահատելի աշխատանք են կատարել Հայոց ցեղասպանության ճանաչման, Արցախի Հանրապետության իրավունքների պաշտպանության եւ ցանկացած համահայկական նշանակության հարցերում: Ըստ նրա, այսօր Արցախում խնդիր ունենք խոսելու հայի ապրելու իրավունքի մասին, ուստի նմանատիպ հանդիպումները, ժողովները Ստեփանակերտում անցկացնելն Արցախում բնակվողի համար մի հույսի շող է, որ ամեն ինչ վերջացած չէ:

Դեկտեմբերի 3-ին ՀՀ Գ Դատի հանձնախմբերի եւ գրասենյակների ներկայացուցիչները ժամանել են Ասկերանի շրջանի մի շարք համայնքներ, ծանոթացել Արցախի օկուպացված տարածքների բնակիչների համար կառուցվող բնակարանների շինարարական աշխատանքներին:

## Զրույց Հայ դատի պատասխանատուների հետ

«Ապառաժ»-ը գրուցել է Նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 3-ը կայացած՝ ՀՀ-ի Հայ դատի հանձնախմբի եւ գրասենյակների խորհրդաժողովի մի շարք մասնակիցների հետ: Հայ դատի ներկայացուցիչները խոսել են խորհրդաժողովի, Արցախի հիմնահարցի ուղղությամբ իրենց ծավալած աշխատանքի մասին:

### Կիպրոսի Ներկայացուցիչների պալատն ընդունել է «Հայերի նկատմամբ Ադրբեջանի շարունակական ագրեսիան եւ Լեռնային Ղարաբաղում ընթացիկ իրավիճակի վերաբերյալ» բանաձեռը

Դեկտեմբերի 3-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը միաձայն ընդունել է «Հայերի նկատմամբ Ադրբեջանի շարունակական ագրեսիան եւ Լեռնային Ղարաբաղում ընթացիկ իրավիճակի վերաբերյալ» վերտառությամբ բանաձեռը:

Բանաձեռը դատապարտում է Ադրբեջանի ագրեսիան Հայաստանի եւ Արցախի դեմ, պահանջում է ի կատար ածել 2020թ. Նոյեմբերի 9-ի զինադադարի հայտարարության դրույթները, այդ թվում՝ գերիների անհապաղ արձակումը: Բանաձեռը նաեւ դատապարտում է թուրքական ներգրավվածությունը Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված պատերազմում:

Կիպրոսի Հայ դատի հանձնախմբի ատենապետ Հակոբ Ղազանչյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ բանաձեռի ընդունումը կապված է Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ 2020 թվականի Նոյեմբերի 9-ի զինադադարի հայտարարության ստորագրման մեկ տարուհի:

«Կիպրոսի Հայ դատի հանձնախմբում 2020թ. մարտին ձեւավորեց Արցախի բարեկամների շրջանակը՝ ընդգրկելով քաղաքական գործիչներ, խորհրդարանականներ, քաղաքապետեր, լրագրողներ, որոնք այցելել են Արցախ կամ դրսևորել են հայամետ կեցվածք: Ուրախ եմ հայտարարելու, որ շնորհիվ Կիպրոսի Հայ դատի հանձնախմբի եւ Արցախի բարեկամների շրջանակի, ինչպես նաեւ վայելելով Կիպրոսի ներկայացուցիչների պալատում համայնքի պետական ներկայացուցչի աջակցությունը, Կիպրոսի խորհրդարանը բանաձեռն ընդունեց, որը դատապարտում է Ադրբեջանի ագրեսիան Արցախի նկատմամբ»,- նշել է նա:

Հակոբ Ղազանչյանի խոսքով՝ Արցախն իրենց համար պարզ հետաքրքրության նյութ չէ, այլ փոքր տարիքից ստացած դաստիարակություն, որը մղում է աննահանջ պայքար ծավալել հայ ժողովրդի իրավունքների համար:

### Իրանի դիվանագիտությունը բազմաշերտ է

«Մեզ համար շատ կարեւոր էր Արցախ այցելելը, հատկապես՝ հետպատերազմյան շրջանում»,- նշել է Թեհրանի Հայ դատի գրասենյակի ներկայացուցիչ Սարինե Թորոսյանը: Նրա խոսքով՝ այս ծանրագույն շրջանը հարթահարելու համար պետք է որոշել մեր առաջնահերթությունները, իսկ Արցախի հարցը պետք է առաջին տեղում լինի:

Սարինե Թորոսյանը չհամաձայնեց այն նկատառմանը, որ Իրանի արտաքին քաղաքականությունը ադրբեջանամետ է: Ըստ նրա՝ իրանական դիվանագիտությունը շատ շերտեր ունի, եւ միայն հրապարակային հայտարարությունները, խոսքերը չպետք է նկատի ունենալ: Հնարավոր է նաեւ հրապարակային այդ կեցվածքը պայմանավորված լինի Իրանում

պանթուրքական տանդեմը վերահսկելու մղումով:

Ս. Թորոսյանը հիշեցրեց Իրանի արտաքին գործերի նախարարի՝ մայիսին արված հայտարարությունն այն մասին, որ տարածաշրջանի երկրների միջազգայնորեն ճանաչված սահմանները եւ տարածքային ամբողջականությունը Թեհրանի կարմիր գծերն են: Ինչ վերաբերում է իրանահայ համայնքին, ապա, Սարինե Թորոսյանի խոսքով, այն հայության մի մասնիկն է: Մարդիկ կան, որ դեռ քնից չեն արթնացել, պաշտպանում են դավաճանական իշխանությանը, մի հատվածն էլ քնից զարթնել է եւ հասկացել իր սխալը, իսկ մյուս հատվածը վերջին տարիներին միշտ մտահոգ էր:



«Մենք իրանական տարբեր լրատվամիջոցների հետ սոցիալական ցանցերում լայնածավալ աշխատանք ենք տանում՝ հասարակության շրջանում Արցախի մասին իրական տեղեկություններ հաղորդելու, ինչպես նաեւ Ադրբեջանի, Թուրքիայի, Իսրայելի ագրեսիվ քաղաքականության մասին տեղեկացնելու համար»,- նշել է Սարինե Թորոսյանը:

### Եթե, աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով, խաղաղապահները լքեն տարածքը, պետք է պատրաստ լինենք ինքնուրույն պայքարել

ՀՀ-ի Հայ դատի հանձնախմբի եւ գրասենյակների խորհրդաժողովի երկրորդ մասն Արցախում գումարելը մեծ իմաստ էր պարունակում: Մենք ասում ենք, որ անկախ ամեն ինչից՝ մշտապես գտնվելու ենք Արցախի կողքին: «Ապառաժ»-ի հետ զրույցում այս կարծիքն է հայտնել ՀՀ-ի Հայ դատի Մոսկվայի գրասենյակի ղեկավար Ներսես Ներսեսյանը:

«Հերթական խորհրդաժողովն էր, որի ընթացքում մենք խնդիր ունենք համադրելու մեր աշխատանքները, պլանավորելու հետագա անելիքները: Ցավոք սրտի, այս խորհրդաժողովի ժամանակ արդեն ունենք պարտված եւ բզկտված Հայաստան, Արցախ: Բայց Հայ դատն այն պաշտպանն է, ժամկոչը, որ պետք է զնգացնի, հիշեցնի, որ մենք դատ ունենք, պահանջ ունենք»,- նշել է Ներսես Ներսեսյանը:

Անդրադառնալով հետագա անելիքներին՝ նա հույս է հայտնել, որ Արցախի իշխանություններն իրենց մեջ ուժ կգտնեն ամեն ինչ մի կողմ դնելու եւ իրական համագործակցության եզրեր գտնելու գրասենյակների, հանձնախմբի հետ՝ առաջ տանելու Արցախի ճանաչման, Արցախի սուբյեկտիվության բարձրացման եւ աջակցության հարցը:

«Հայ դատի գրասենյակները, հանդիսանալով սփյուռքյան կազմակերպություններ, չպետք է ջանք խնայեն Սփյուռքին, համայն հայությանը մասնակից դարձնելու Արցախի շենսցման գործընթացին: Այս պահին Արցախը վիրավոր է, բայց կանգնում: Արցախը չի մահանալու,

քանի մենք մեր մեջ չենք թաղել Արցախը, քանի ուզում ենք, որ Արցախն ապրի»,- ավելացրել է նա:

Խոսելով Արցախում ռուս խաղաղապահների տեղակայման մասին՝ ՀՀ-ի Հայ դատի Մոսկվայի գրասենյակի պատասխանատուն ասել է, որ քանի խաղաղապահներն առկա են, լայնամասշտաբ բախումների հավանականությունը քիչ է, բայց երաշխիք չունենք, որ սա երկար կտեւի, եւ որեւէ պահի, եթե, աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով, խաղաղապահները լքեն տարածքը, պետք է պատրաստ լինենք ինքնուրույն պայքարել:

«Մի տարի առաջ դավաճանության, խաբեության, անշնորհքության եւ թշնամու հետ համագործակցության արդյուն-

քում մի ամբողջ ժողովրդի հայրենազրկեցին, մեր վանքերը թողեցին թշնամու պղծության ներքո: Արցախցին լավ է հասկանում այս իրավիճակը. կգա պահը ու նա իր խոսքը կասի»,- նշել է Ներսես Ներսեսյանը:

### Մեզ համար Արցախի կարգավիճակի հարցն առաջնահերթություն է

ՀՀ-ի Հայ դատի Բելգիայի հանձնախմբի ատենապետ, Բելգիայի հայերի կոմիտեի փոխնախագահ Պետիկ Պետրոսյանը տեղեկացրել է, որ խորհրդաժողովի քննարկումների առյուծի բաժինը վերաբերում էր Արցախին: «Մեզ համար առաջնահերթություն է Արցախի կարգավիճակի հարցը եւ փորձում ենք ամենուր առավելագույնն անել, որ Արցախի ծայրը բարձրացնենք»,- ասել է նա:

Պետիկ Պետրոսյանն անդրադարձել է Արցախյան վերջին պատերազմից հետո կատարվող աշխատանքներին, որոնք ուղղված են հատկապես Արցախի ճանաչմանը:

«Նամակներ ենք ուղղել Բելգիայի օրենսդիր եւ գործադիր մարմիններին՝ հորդորելով դատապարտել Ադրբեջանի կողմից ՀՀ եւ ԱՀ տարածքային ամբողջականության խախտման փաստերը: 2020թ. դեկտեմբերին Բելգիայի Ներկայացուցիչների պալատը բանաձեռ է ընդունել, որում դատապարտում է ռազմական գործողությունների վերսկսումը, Բելգիայի խորհրդարանին կոչ է անում միջոցներ ձեռնարկել՝ մեղմել բնակչության գրկանքները եւ պատասխանատվության ենթարկել ռազմական հանցագործներին, պահպանել զինադադարը եւ խաղաղության պայմանագիր կնքել՝ հարգելով Լեռնային Ղարաբաղի սահմանները եւ ժողովրդի իրավունքները:

Խորհրդարանը քննարկատել է նաեւ Թուրքիայի դերը պատերազմի ընթացքում, պահանջել դադարեցնել նրա միջամտությունը եւ ձեռնապահ մնալ իր ապակայունացնող քայլերից»,- նշել է Պետիկ Պետրոսյանը՝ հավելելով, որ այժմ աշխատում են այս բանաձեռը թարմացնելու ուղղությամբ:

Նա տեղեկացրել է, որ ՀՀ դեսպանի մի-

ջոցով Բելգիայի հայերի կոմիտեն նամակ է ուղղել ՀՀ կառավարությանը. «Նամակում Բելգիայի հայերը մտահոգություն են հայտնել վերջին զարգացումների, առանց Արցախի կարգավիճակի հստակեցման սահմանների փոխադարձ ճանաչման վերաբերյալ: Մեր կարծիքով՝ սահմանների ճշտման ցանկացած փաստաթղթի պետք է նախորդի Արցախի կարգավիճակի վերաբերյալ փաստաթուղթ, հակառակ պարագայում որեւէ շտապողականություն կարող է բերել Արցախի կորստին»:

ՀՀ-ի Հայ դատի Բելգիայի հանձնախմբի ատենապետը նաեւ ավելացրել է, որ Արցախի բարեկամների խմբի հետ շարունակում են աշխատանքները հատկապես կրթական, մշակութային ոլորտներում: Այդ համագործակցության շրջանակներում Ասկերանի շրջանում երկու դպրոց են վերանորոգելու:

Անդրադառնալով պատերազմի եւ դրա հետեւանքների մասին հարցին՝ Պ. Պետրոսյանը նշել է, որ այն սեփականում էր ողջ հայությանը, բայց այդ ընկճվածությունը երկար չտեւեց: Այսօր ուժերը վերահավաքել ու աշխատանքներ են տանում հաշմանդամ զինվորների, զոհվածների ընտանիքների հետ կապված: «Պատերազմը չի վերջացել, մեզ համար այն շարունակվում է: Այսօր Արցախի Հանրապետությունը գտնվում է ծանր վիճակում, եւ մեր պարտքն է միասնական լինել եւ հնարավորինս օգտակար լինել Արցախի Հանրապետությանը»,- կարծում է Պետիկ Պետրոսյանը:

### Երբ հարցն Արցախին է վերաբերում, մյուս խնդիրները կարծես մոռացվում են

Պատերազմից հետո ավելի են շեշտվել Արցախի հարցով մեր աշխատանքները. հիմնական օրակարգերը նույնն են մնացել՝ Արցախի անկախության ճանաչում, ինքնորոշման իրավունքի պաշտպանություն: Սակայն դրանց վրա ուրիշ հարցեր էլ են ավելացել՝ պատերազմական գերիների, մշակութային ցեղասպանության եւ ընդհանրապես մարդասիրական օժանդակությունների հարցը: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում ասել է ՀՀ-ի Հայ դատի հանձնախմբի եւ գրասենյակների խորհրդաժողովի մասնակից, Լիբանանի Հայ դատի հանձնախմբի ատենապետ Վահրամ Եմիլյանը:

Նրա խոսքով՝ Արցախի հետ կապված հարցերն արծարծում են օտարերկրյա դեսպանների, տեղացի մտավորականների հետ հանդիպումների ժամանակ, նաեւ նամակագրության միջոցով մնայուն կապի մեջ են օտարերկրյա դեսպանատների հետ, մասնավոր ՎԱՀԿ Միսսիլի խմբի համանախագահ երկրների հետ:

Վահրամ Եմիլյանը նշել է, որ Լիբանանում սոցիալ-տնտեսական իրավիճակը բավականին ծանր է, բարձրացել են ապրանքների եւ ծառայությունների գները, էլեկտրականության չկա, ջրի ճգնաժամ կա: Բայց երբ հարցը Արցախին է վերաբերում, այս խնդիրները կարծես մոռացվում են: «Լիբանան-Արցախ կապը զգացականից վեր է: Լիբանանը եւ Արցախը շատ մտերիմ կապեր ունեն. այստեղ նահատակներ ենք ունեցել՝ Միտր Զուլիհանյան, Վիզել Զաքարյան, վերջին պատերազմին՝ Գեւորգ Հաջյան»,- ասել է Լիբանանի Հայ դատի հանձնախմբի ատենապետը:

Մեր զրուցակիցը կարեւորել է խորհրդաժողովի անցկացման վայրերը՝ Արցախը եւ Սյունիքը, առկա հարցերը լուսարձակի տակ բերելու եւ զորակցություն հայտնելու առումով:

Տարբերակ ԱՄՆԱՍՆԱՍՆ

### Սրբատեղի դարձած մարտական դիրքը

Դեկտեմբերի 7-ին տեղի է ունեցել 44-օրյա պատերազմի ընթացքում, հոկտեմբերի 31-ին Մարտունու մերձակայքում անօդաչուի հարվածից սահառակված 7 տղաների՝ Արտակ Իշխանյանի, Արսեն Դադամյանի, Միքայել Արզումանյանի, Ապավեն Բարսեղյանի, Գրիշա Գասպարյանի, Վազգեն Աբրահամյանի եւ Նիկոլայ Նիկողոսյանի հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձանի բացումն ու օծման արարողությունը:

Արարողությունը ներկա էին տղաների հարազատներն ու ընկերները, ծառայակիցները, ՀՀ Կրթության և գիտության նախարարի, ՀՀ Մարտունու կոմիտեի անդամներ, ԱՀ նախագահ Արայիկ Զարուբյանյանը, Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Էդիկ Ավանեսյանը, ԱՀ ռազմական գերատեսչությունների բարձրաստիճան սպաներ, զինվորականներ:

Խաչքարի օրհնությունը կատարվել է Տեր Անդրեաս քահանա Թավադյանի ձեռամբ:

Տեր Անդրեաս քահանա Թավադյանը իր խոսքում նշեց, որ ինչպես Գողգոթան է քրիստոնյաների համար սրբավայր դարձել, այնպես էլ՝ այս վայրը մեզ համար, որովհետև այս վայրը նախկինում դիրք է եղել, որն իրենց այրամբ սրբազործեցին սահառակ տղաները: «Հայաստան աշխարհում հազարավոր խաչքարեր են կանգնեցված՝ լուռ քարեր, սակայն այդ լուռության միջից լսվում է մի մեծ աղաղակ, մի բողոքի ձայն, որն աշխարհին է տիրում՝ ասելով, որ մենք պայքարող ազգ ենք, քրիստոսի ճանապարհով ընթացող ազգ ենք, եւ այսօր այս խաչքարն էլ լուռությամբ պետք է աղաղակի ամբողջ աշխարհին. վատահ են՝ լսելի կլինի»,-ասել է նա:

Չեկուցմամբ հանդես եկավ ԱՀ ՊՅ 3-րդ պաշտպանական շրջանի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Միեր Սարգսյանը:

«Այսօր թախծոտ, բայց միեւնույն ժամանակ արժանափառ օր է, երբ մենք պատասխանատու ենք ոչ միայն մեր ապագայի, այլև մեր ամենաարժանավոր զավակների հիշատակի առաջ, մենք պատասխանատու ենք սահառակված մեր բոլոր անվեհեր մարտիկների առաջ, ովքեր հայրենի հողի լուսավոր ծնունդն են եղել, սերվել ու դաստիարակվել են լավագույն, ազգային, վեհ, հայրենասիրական գաղափարներով և հզոր հավատքով: Մեր հայրենիքի նվիրյալ զավակները արժանապատվորեն եւ հերոսաբար կանգնեցին եւ կռվեցին քոչվոր, թշվառ ու արյունախումբ թուրք սուրի ղեմ, մինչեւ վերջ պայքար մղեցին հայրենիքի պաշտպանության, երկրի ու ժողովրդի անվտանգության համար:

Գիտե՛ք, թե Հայոց աշխարհը ինչքան հերոսներ է ծնել, սակայն ի՛նչ: Արդե՛քանի բռնակալության ցեղասպան մահազանդ դեռես փորձում է հնձել մեր ազգի սերունդը, բայց թող երբեւիցե չթվա, թե հակառակորդն ինչ-որ առավելություն ունի մեր նկատմամբ, քանզի մեր հերոս

զավակներն արիության եւ խիզախության բացառիկ օրինակներ ցուցաբերեցին, եւ թշվառ, անհայրենիք ունիող դեռ երկար կհիշի մեր տղաների բազկի ուժը: Սրանք հերոսացան հանուն մի նպատակի, նպատակ, որն ասում է. «Դուք պարտվելու իրավունք չունեք, դուք պետք է կերտեք այն հաղթանակները, որոնք կերտել եք Ավարայրում, Սարգարապատում, Բաշ-Ապարանում»: Սերվելով Հայկ Նահապետից՝ մերօրյա հերոսները դարձան Եղիշեի «Մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ անմահություն»



թեավոր խոսքերի պատգամախոսներն ու դրոշակակիրները: ԱՀ ՊՅ 3-րդ ՊՇ 7-30 հրետանային դիվիզիոնի պահեստագորայինները մերօրյա հերոսներն են: Սրանք պատվով եւ բարձր գիտակցումով կատարել վերահաս հրամանատարության հրամաններն ու առաջադրանքները:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում սրանք իրենց անմահացող նվիրումն ունեցան՝ մարտնչեցին մինչեւ վերջ՝ վեր դասելով սեփական երկրի անվտանգությանը, սերունդների ապագան, տվեցին թշնամուն զգալի կորուստներ, ավաղ, ընկան Արցախ աշխարհի ազատության, արցախահայրության ազատ կամքի ինքնորոշման համար՝ իրենց տեղը գտնելով հայոց անվեհեր մարտիկների՝ Մուկեթի, Վազգենի, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Արամ Մանուկյանի, Դավիթ-Բեկի, Լեոնիդ Ազադյանի, Մովսես Գորգիսյանի, Կոմանդոսի եւ այլոց կողքին:

Հարգելի՛ հայրենակիցներ, հպարտ ու անկոտրում հայացքով նայեք աշխարհին: Այո՛, մեր հերոս նահատակված հերոսները վերադարձել են հաղթանակով: Սրանք կան, սրանք մեր կողքին են, մեր շարքերում, սրանք հավերժ են, հավերժ են մեր լեռների պես, սրանք հերոս են, իսկ հերոսները չեն մեռնում:

Մեր գետնատարած խոնարհումը բերելով ձեզ, դառն, բայց հպարտ ճակատագիր ճաշակած սգակիր հարազատներ, հավաստիացնում ենք ձեզ՝ ապրելու կենս էլ պատվով մեռնելն է: Կեցցե՛ք դուք եւ հավերժ փառք մեր մարտիրոսված հերոսներին, հավերժ փառք հայ ժողովրդին, Հայաստան եւ Արցախ աշխարհին: Աստված ապավեն մեզ եւ մեր նախնայք բնօրրանին:

Միասնական կամքով մեր հերոս զավակների անունները մեր սրտերում մշտապես պատրաստ ենք պահպանել եւ պաշտպանել ձեր եւ մեր կողմից պաշտպանված այս սուրբ հողակտորը եւ մենք դա կանենք հանուն Հայաստանի եւ Արցախի, հանուն ձեզ: Աստված մեր ժողովրդին գորավիզ»,-ասել է Միեր Սարգսյանը:

Միջոցառման իր խոսքը է ասել նաեւ ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ Արսեն Դադամյանը:

«Ինչպես եկեղեցում չի լինում բարձրաձայն աղոթել, այնպես էլ այստեղ շատ ոժվար է խոսել: Նոյեմբերի 9-ից այս կողմ իմ եկեղեցին այս վայրն ու Եռաբլուրն է, եւ ամեն անգամ ես այստեղից հեռանում եմ հզորացած, պայքարի ոգով լցված, դրական էներգիայով լեցուն:

Ամեն անգամ ինքս ինձ հարց եմ տալիս՝ եթե չլիներ հոկտեմբերի 31-ի արհավիրքը, արդյո՞ք եղբայրս ողջ կմնար, բայց գիտակցում եմ, որ՝ ոչ, որովհետեւ նա այն տեսակն էր, որ իրենից կախված ամեն ինչն անում էր, նա այն տեսակը չէր, որ պետք է արդարանար: Չլիներ այս հանգամանքը, մեկ ուրիշ հանգամանքում նա անպայման կզոհվեր, իսկ այս պայքարն այդ տղաներին էր:

Ես շատ լավ եմ գիտակցում, որ այս պատերազմում մենք միայն մեր տղաներին չգոհաբերեցինք: Այս պատերազմում մենք գոհաբերեցինք մեր մայրերին, եւ ես ուզում եմ առաջին հերթին իմ խոնարհումը բերել այդ մայրերին, որովհետեւ ամենաոժվարն այս պահին սրանք համար է:

Այսօր այստեղից ուզում եմ ասել. «Մահ, մեզ էլ սովորեցրու քո տեսակը, որովհետեւ մենք էլ պետք է սովորենք գոհաբերել ու գոհաբերվել: Մեր պայքարը հարատու է, մեր պայքարը չի վերջացել: Ուստի, բոլորիդ խնդրում եմ, այստեղ մի՛ այցելեք տարին մեկ կամ երկու անգամ: Ձեր երեխաներին հաճախ բերեք այստեղ, պատմեք տղաների մասին, որովհետեւ պետք է մեր ոգին բարձր պահենք, որովհետեւ մեր պայքարը չի վերջացել՝ ինքնախաբեություն մի՛ զբաղվեք»,-ասել է Այլոնա Դադամյանը:

Տղաները ԱՀ նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել են «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշաններով, որոնք նախագահը հանձնել է հարազատներին:

Նահատակ տղաների հոգիների հանգստության համար կատարվել է նաեւ հոգեհանգստյան կարգ:

Վահագն ԿԱՉԱՏՐՅԱՆ

### Դժվար է մեզ պոկել մեր սարերից, մեր հող ու ջրից. Գարիկ Ալեքսանյան

Մշուշում կորած, սակայն ոչ մշուշոտ ապագայով՝ սահմանամերձ դարձած Սառնաղբյուրը շարունակում է ապրել եւ արարել՝ ի հեճուկս թշնամու, որ տեղակայված է գյուղից ընդամենը 500 եւ 800 մ հեռավորության վրա:

Սառնաղբյուրը Ասկերանի շրջանի հիմնավոր գյուղերից է: Գյուղում գտնվող պատմամշակութային հուշարձանները թվագրվում են 16-րդ դարից սկսված. գերեզմանոց՝ 16-19 դդ., Սբ. Գեորգ եկեղեցի՝ 1875թ., ջրաղաց՝ 19-րդ դ.:

Գյուղի առօրյա կյանքի, պատերազմի պատճառած անհարմարությունների ու ստեղծված խնդիրների մասին «Ապառաժ»-ը գրուցել է համայնքի ղեկավար Գարիկ Ալեքսանյանի հետ:

Գարիկ Ալեքսանյանի խոսքով՝ գյուղի 65%-ը վերաբնակիչներ են, քանի որ Արցախյան առաջին պատերազմից հետո վերաբնակեցման առումով գյուղը գտնվում էր պետության ուշադրության կենտրոնում:

Գյուղացիների հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Գյուղում գործում է գյուղապետարան, բուժկետ, հանդիսությունների սրահ եւ տարրական դպրոց, որտեղ սովորում է 3 աշակերտ, աշխատում՝ 2 ուսուցիչ, 14 աշակերտ էլ հաճախում է Նախիջեանիկի միջնակարգ դպրոց: Գյուղում նախադպրոցական եւ դպրոցական տարիքի 33 երեխա կա: Համայնքի ղեկավարի խոսքով՝ դպրոցը վերանորոգվել է համագյուղացի բարերարի ջանքերով:

Թեեւ պատերազմական գործողություններից հետո գյուղը սահմանամերձ է դարձել, սակայն դա չի խանգարում գյուղացիներին զբաղվել գյուղատնտեսությամբ: «Ծիշտ է, թշնամին մոտեցել է ընդհուպ մինչեւ մեր վարելահողերին, դժվարացել է անասնապահությամբ զբաղվելը, սակայն գյուղացիներն զբաղվում են առօրյա հոգսերով, եւ չնայած ստեղծված իրավիճակին՝ ցանկություն ունեն նոր այգիներ հիմ-

նելու»,-ասում է համայնքի ղեկավարը:

Մարդկանց վարելահողերից թշնամին գտնվում է ընդամենը 15մ հեռավորության վրա: Այդ դաշտերում աշխատանքներ կատարելու համար համայնքը դիմում է ռուս խաղաղապահների օգնությանը:

Գյուղի առաջնահերթ խնդիրը Գարիկ Ալեքսանյանը համարում է ճանապարհների վատթար վիճակն ու ռոզման համակարգի բացակայությունը, որի համար հաճախ են գյուղացիները դիմում իրեն:

Գյուղում աշխուժություն են մտցնում երիտասարդները, ովքեր պատերազմի ժամանակ անմիջապես մոբիլիզացվել էին, իսկ մեծահասակները զբաղվում էին թիկունքային աշխատանքներով, գյուղում հերթապահություն իրականացնում, անհրաժեշտության դեպքում՝ առաջնագիծ մեկնում, հաշվի չառնելով ոչ հաշվանդամություն, ոչ տարիք:

Գյուղացիները վերադարձել եւ շարունակում են ապրել հարազատ գյուղում, չնայած թշնամու կողմից լինում են սադրանքներ, փորձում են խուճապի մատնել ժողովրդին, ինչն, իհարկե, սրանց չի հաջողվում: Գյուղացիներն ապավինում են Պաշտպանության բանակին, վստահում հայ զինվորի բազկի ուժին, ովքեր օր ու գիշեր հսկում են գյուղը:

Գարիկ Ալեքսանյանը վստահորեն նշում է, որ մեզ այս հողից պոկել չի լինի: «Մենք այստեղ ենք ծնվել, մեր եկեղեցին, գերեզմաններն այստեղ են եւ մենք չենք կարող հրաժարվել այդ ամենից»,- ասում է նա:

Պատերազմի ժամանակ գյուղը մեկ գոհ եւ 3 փրավոր է ունեցել: Կրակում էին

գյուղի ուղղությամբ, սակայն ոչ թիրախավորված:

Գարիկ Ալեքսանյանը համոզված է, որ պատերազմն այլ ելք կունենար, եթե չլիներ թուրքական ԱԹՄ-ներն ու Թուրքիայի աջակցությունը: «Մենք ներդրել էինք մեր ողջ ներուժը, մեր զինվորի ոգին տեղն էր, եւ, եթե չլիներ այդ անօդաչուները, ապա, ըստ իս, մենք կազատագրեինք նաեւ մեր օկուպացված հողերը, այլ ոչ թե հողային



կորուստներ կկրեինք»,- նշում է նա:

Պատերազմի արդյունքում գյուղի 400 հեկար վարելահողից թշնամին բռնագավթել է շուրջ 25 հա վարելահող, իսկ գյուղին մնացել՝ 375 հա: Անասնապահությունը, որը նախկինում գյուղում շատ զարգացած էր, այժմ ցանկալի զբաղմունք չէ: «Դժվար է վերահսկել, որպեսզի անասունները չհանձնեն թշնամու կողմից բռնագավթված տարածքներ»,- ասում է նա:

Համայնքի ղեկավարը կարծում է, որ գյուղում պետք է զարգացնել ենթակառուցվածքները: «Լավ կլիներ, եթե նոր բնակարաններ կառուցվեին, վերաբնակեցվեր գյուղը. դպրոցում էլ երեխաների թիվը կշատանար»,-ասում է Գարիկ Ալեք-

սանյանը:

Այս պահին Ակնայի շրջանից գյուղում հաստատվել է հինգ հոգանոց մի ընտանիք:

Գյուղում բնակարանային ֆոնդը կբավարարի նոր բնակիչներ ընդունելու համար: Պատերազմից հետո դրանց մի մասը սկսել են վերանորոգել, բնակչությանը տրվում են նաեւ շինանյութեր:

Գարիկ Ալեքսանյանը համոզված է, որ գյուղում հնարավոր է աշխատել եւ արդյունք ապահովել, միայն թե խելքով պետք է աշխատել: «Անտառները հարուստ են վայրի պտուղներով եւ հատապտուղներով, ուստի գյուղացիները կարողանում են օգտվել այդ ամենից»,- նշում է Գարիկ Ալեքսանյանը:

Գյուղը լուսավորվածություն ունի, սակայն թարմացնելու կարիք կա: Առկա է ջրամատակարարման նոր համակարգ, սակայն առկա ռեսուրսները թույլ են տալիս միայն օրական 2 ժամով ջրը տրամադրել բնակիչներին:

Ապագան Գարիկ Ալեքսանյանը միայն գյուղում է պատկերացնում: «Դժվար է մեզ պոկել մեր սարերից, մեր հող ու ջրից: Մենք աշխատում ենք, եւ պետք է ամեն ինչ անենք մեր հողը հայկական պահելու, հային ու հայկական շունչն այստեղ պահելու համար»,- ասում է նա:

Նրա խոսքով, թեեւ դպրոցում սովորում են միայն 3 աշակերտ, սակայն ամեն օր այնտեղից հնչող զանգի զոռանքը թշնամուն հիշեցնում է, որ սահմանից այս կողմ հայն է ապրում՝ չնայած իրենց ներկայությունը:

«Թշնամու աչքի առաջ կատարվող վար ու ցանքսը հասկացնում է սրանց, որ հայն իր ապագան այս հողի հետ է կապում: Մենք այլ կերպ մտածելու իրավունք չունենք: Ինչ ունենք՝ սա է: Պետք է աշխատենք ստեղծված իրավիճակից դուրս գալու եւ կորցրածը եւ բերելու համար»,- նշում է նա:

Վ. ԿԱՉԱՏՐՅԱՆ

# Դաշնակցության ուշադրության կենտրոնում է սփյուռքում եւ հայրենիքում ապրող երիտասարդների միջեւ ամուր կապի ապահովումը

2021թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 5-ը ինձ եւ իմ ընկեր Բենոյին բախտ վիճակվեց այցելել Սիրիա, ծանոթանալ սիրիահայ համայնքին եւ այնտեղ տարվող աշխատանքներին:

Նախաձեռնությունը ՀՀ Բյուրոյի երիտասարդական գրասենյակին էր, որի նպատակը Արցախ-Սփյուռք կապերի ամրապնդումն էր, նամանավանդ՝ ՀՀ Երիտասարդական, պատանեկան եւ ուսանողական միությունների մակարդակներով: Իհարկե, նախքան մեկնումը մենք Սիրիայում տիրող իրավիճակի մասին ճիշտ պատկերացումներ չունեինք, ավելին՝ եղածն էլ, պարզվեց, այդքան էլ չէր համապատասխանում իրականությանը:

Մեր ընկերները մեր այս որոշումը խելամիտ չէին համարում՝ ասելով, որ պատերազմական մի տարածաշրջանից մեկ այլ պատերազմական եւ ուսանողական երեք մեկնում, սակայն հետագայում պետք է հասկանալիք, որ սա սովորական այցելություն չէր, ե՛ւ որ այս այցն անհրաժեշտություն էր թե՛ մեզ, թե՛ սիրիահայության համար:

Հալեպի օդանավակայանի հասանք արդեն երեկոյան եւ ունենիք շատ հակասական զգացումներ: Դեռեւս օդանավում արդեն հասկացել էինք՝ քաղաքը մթության մեջ կորած էր: Մենք դա կանխատեսում էինք:

Օդանավից իջնելուց հետո մեզ անմիջապես դիմավորեցին սահմանապահ ծառայության աշխատողները, ովքեր տեղյակ էին մեր այցի մասին եւ սպասում էին մեզ՝ մեր անվտանգությունն ապահովելու համար:

Հալեպը կորած է լարային սարդոստայնի մեջ: Մարդիկ լույս չունեն, ուստի լարերով գեներատորներից են հոսանք հասցնում շենք: Մթության մեջ մեզ լուսավորում էին անցորդների փայլող աչքերն ու ջերմ ժպիտները, որոնք ուղղված էին դեպի մեզ: Փողոցում լուսն էինք հայերեն խոսք, անցորդները մեծամասամբ մոտենում էին բարի գալուստ էին մաղթում մեզ. պարզվեց՝ գաղութում բոլորը գիտեին եւ սպասում էին մեր ժամանմանը:

Սիրիական հյուրընկալ հողն առաջին հանգրվանը դարձավ, որտեղ ապաստան գտան ցեղասպանությունից մազապուրծ հայերը: 16-րդ դարից սկսած Հալեպում կար հայկական գաղութ, սակայն այն ավելի կազմակերպվեց եւ վերածնվեց ցեղասպանությունից հետո: Արեւմտյան Հայաստանից, Դեր-գորի անապատներից փրկված հայերը հաստատվեցին Հալեպում, Համալու: Հալեպի շրջաններից «Մայրան»-ը, որտեղ հիմնականում հաստատվել էին մեր հայրենակիցները, անվանակոչեցին «Նոր գյուղ»: Այստեղ էլ կենտրոնացված են հիմնական հայկական շենքերը, ակումբները, եկեղեցիները, դպրոցները, մարզական կենտրոնները, տպարանը:

Սիրիայի ժողովուրդը հանդուրժողականությամբ ընդունեց տեղահանված հայերին եւ, տարիների ընթացքում այդ հանդուրժողականությունը վերածվեց հարգանքի առ հայ ժողովուրդ, հայկական մշակույթ ու կրոն:

Գաղութի կյանքն այսպես շարունակվել է. բացվել են եկեղեցիներին կից դպրոցներ, նախակրթարաններ, տպագրվել տասնյակ թերթեր: 2010թ. դրությամբ՝ Սիրիայում հայերի թիվը կազմում էր մոտ 75 000, մեծամասնությունը՝ 50 000-ը: Հալեպում է տեղակայված նաեւ Բերիո թեմ նստավայրը: Սիրիայում տպագրվող միակ թերթը հայկական «Գանձասար»-ն է, որի խմբագրական կազմի հետ առիթ ունեցանք եւս հանդիպելու:

2010թ. Սիրիայում սկսված պատերազմը պատճառ դարձավ սիրիահայության նոր արտագաղթի: Մեծամասնությունը՝ 2/3-ը արտագաղթեց Հայաստան, Կանադա, Եվրոպա: Եվ, բնականաբար, վերջին 10 տարիներից գաղութի կյանքը հիմնականում փոխվեց:

**Կրթական բնագավառ** Սիրիայում գործում է 28 հայկական դպրոց, Հալեպում՝ 14 հայկական վարժարան, սակայն միայն 3-ում է, որ սովորում են բացառապես հայ աշակերտներ: Մնացած դպրոցներում, որտեղ կրթության որակը բավականին բարձր էր, ցավոք, նաեւ արաբ աշակերտներ սկսեցին ընդգրկվել՝ աշակերտների թվի նվազման պատճառով:

Հալեպում մենք այցելեցինք Սիրիայի 8 դպրոցներ, որտեղ հանդիպումներ ունեցանք ուսուցչական եւ աշակերտական անձնակազմի հետ, ներկայացրինք Արցախում տիրող հետպատերազմյան իրավիճակը, խոսեցինք ՀՀ Կրթախի երիտասարդական եւ պատանեկան միության աշխատանքների մասին, ներկայացրինք պատերազմի սկսման դրդապատճառներն ու ընթացքը, մի քանի դրվագ պատմեցինք մեր տղաների կատարած բավաթիվ հերոսական արարքներից, պատասխանեցինք նրանց հուզող հարցերին, ինքներս էլ ծանոթացանք ուսումնառության կազմակերպման ընթացքին, շենքային պայմաններին: Հատկապես մեզ համար տպավորիչ էր երեխաների եւ, ընդհանրապես, հայության՝ հայոց լեզվով վարժ ու ազատ խոսելը, չնայած փոքր տարիքներին՝ մեծահասակին վայել քաղաքական ու տնտեսական հարցերի մասին պատկերացումները, նրանց ցանկությունները՝ Արցախ գալու, զինվոր դառնալու, Հայրենիքը պաշտպանելու: Հիշատակման են արժանի Հրանտ Կիրակոսյանի խոսքերը՝ «Եթե պետք է

մեռնեմ, թող հայրենիքս համար մեռնեմ»: Իրենք անձամբ հուզվում էին իրենց իսկ երգած հայրենասիրական երգերից, հարցնում Արցախում ապրող իրենց հասակակիցների մասին:

Նկատելի էր այն ճանաչումը, հարգանքն ու սերը, որ վայելում էին սիրիահայ երեք նահատակ հերոսները՝ թե՛ փոքրերի եւ թե՛ մեծահասակների շրջանում:

**Եկեղեցիներ:** Պատերազմի ընթացքում Հալեպում միայն Սուրբ Գեորգ եկեղեցին է, որ ամբողջությամբ հրկիզվել է այնտեղ ընկած արկից, մնացած չորսը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սրբոց Քառասնից Մանկանց, Սբ. Աստվածածին, Սբ. Հակոբ եկեղեցիներն առ այսօր գործում են, իսկ Սուրբ Գեորգ եկեղեցու վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: Այցելեցինք նաեւ Քեսաբի եւ Լաթաքիայի Սբ. Աստվածածին եկեղեցիները: Տեղի քահանաներն ու աշխատողները բարեհամբուր եւ մանրակրկիտ բացատրում էին մեզ յուրաքանչյուր եկեղեցու կառուցման պատմությունը եւ ունեցած նշանակությունը հայապահպանության գործում: Նրանց, եւ, անշուշտ, մեզ համար են հպարտանալու առիթ էր այնտեղ տեղադրված ամեն մի խաչքար, որոնցից յուրաքանչյուրի պատմությունը սիրով պատմում էին մեզ:

Մենք հանդիպում ունեցանք նաեւ Բերիո թեմի առաջնորդ Գերաշնորհ Հայր Մասիս Սրբազան Եպիսկոպոս Չոպույանի հետ: Սրբազանը համապարփակ կերպով անդրադարձավ թեմի պատմությանը, Սիրիայի պատերազմի ծանր տարիներին, քաղաքական առումով համեմատաբար ավելի կայուն ներկա իրավիճակին եւ թեմի ողջ տարածքի ուսումնական, կրթական, եկեղեցական, կրոնական առաջիկա լայնածավալ ծրագրերին:



Մենք էլ մեր հերթին Սրբազան Հորը տեղեկություններ փոխանցեցինք Արցախի ներկա իրավիճակի եւ առկա դժվարությունների մասին, ինչպես նաեւ անդրադարձանք Արցախի 44-օրյա պատերազմին:

**Մշակութային կյանքը:** Հալեպում գործում են մարզական, բարեսիրական, մշակութային միություններ: Մենք այցելեցինք Սիրիայի երիտասարդական, պատանեկան եւ ուսանողական միություններ, մասնակցեցինք նրանց աշխատանքներին, հավաքներին, ինչպես նաեւ կազմակերպեցինք քննարկումներ, դասախոսություններ Հայաստանի եւ Արցախի քաղաքական իրավիճակի, երիտասարդական կյանքի, առկա խնդիրների եւ մարտահրավերների մասին:

Հանդիպումներ ունեցանք ՀՄԸՄ-ի Հալեպի մասնաճյուղի սկսուս խորհրդի անդամների հետ, քննարկեցինք համագործակցության հեռանկարներն ու հնարավորությունները: Տպավորիչ էին պատանիների եւ երիտասարդների կարգապահությունը, դասախոսությանը եւ գիտելիքները հայոց պատմության եւ լեզվի մասին:

Հալեպի հայկական գերեզմանոցում ամփոփված են նշանավոր շատ հայեր: Այցելեցինք ընկ. Սահակ Լալբանդյանի, Սիրիական պատերազմին Հալեպի հայկական թաղամասերի պաշտպանության գործը ստանձնած ընկ. Ռաֆֆի Պազգյանի, հայ ազգի նվիրյալ Զարեն Եփփեի եւ մեր գրականության տիտաններից գրականագետ Հակոբ Օշականի գերեզմաններին, հարգանքի տուրք մատուցեցինք Արցախի 44 օրեայ պատերազմում Շուշիում նահատակված անմահ մեր հերոս ընկերների, Լիզբոնի տղաների, Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին՝ խոնարհվելով նրանց հիշատակը հավերժացնող հուշակոթողներին:

**Համայնքի մարտահրավերները:** Հիմնականում համայնքի խնդիրները տնտեսական են: Մինչեւ 2010թ. գաղութը բավականին լավ էր ապրում: Այն իր ներդրումն է ունեցել Հայաստանում 1988թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու, Արցախյան առաջին պատերազմում հաղթանակ կերտելու եւ Արցախը շենացնելու գործում: Երկրում կոմունալ ծառայությունները գրեթե անվճար էին, սակայն պատերազմից հետո այս ծառայություններն արդեն չեն հերիքում բնակչությանը: Մարդիկ երկու ժամ են կարողանում լույս ստանալ: Սիրիական լիրան 70 անգամ արժեզրկվել է դոլարի նկատմամբ: Հայերին պատկանող խոշոր

գործարանները պատերազմի ընթացքում կողոպտվել են Թուրքիայի կողմից: Հրթիռակոծության հետեւանքով բազմաթիվ հայեր անտուն են մնացել: 2012թ. ՀՀ Լա-խաձեռնությամբ կյանքի կոչվեց «Շտապ օգնության եւ վերականգնումի» մարմինը: Այդ ժամանակ ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, ժամանելով Հալեպ, անմիջապես հանդիպումներ ունեցավ տեղի միությունների եւ կուսակցությունների հետ, ինչից հետո բոլորը ներառվեցին վերոնշյալ մարմնի մեջ: Այն գործեց մինչեւ 2020թ. եւ օգտակար դարձավ տների վերանորոգման գործում: Համայնքի համար կարեւոր էր կրթության շարունակականության ապահովումը, ուստի 10 տարի կրթաթոշակ չգանձվեց աշակերտներից, եւ վճարվեց ուսուցիչների աշխատավարձը:

Այժմ Հալեպում գործում է Բերիո Հայոց Թեմին պատկանող կապուցիոն հանձնախումբ, որտեղ են առիթ ունեցանք այցելելու, ծանոթանալու նրանց աշխատանքներին: Հալեպում գործում է Սիրիահայ օգնության խաչը, որի շնորհիվ Հալեպում գործում է հայկական դարմանատուն, կանանց միություն, մանկամուր: Այստեղ են մենք հյուրընկալվեցինք եւ ծանոթացանք նրանց աշխատանքներին:

Պատերազմի արդյունքում ավերվել է նաեւ Հալեպում գործող հայկական ծերանոցը: Մեծահասակները ժամանակավորապես տեղափոխվել են Վերժին Գյուլբենկյանի անվան մայրանոցի շենք: Մենք առիթ ունեցանք նաեւ տեսնելու այդտեղի բնակիչներին, ծանոթանալու նրանց պայմաններին ու խնդիրներին:

**Մարդու:** Ցավոք սրտի, պատերազմի հետեւանքով համայնքի թիվը հասել է 15 000-ի: Հայությունը արտագաղթեց, իսկ նրանց մեջ էին նաեւ ուսուցիչներ, վարչական ղեկավարներ, արհեստավորներ: Այսօր կան արհեստներ, որոնք արդեն չեն գործում Հալեպում: Սակայն հալեպահայերը, որոնք արդեն Սիրիայից դուրս են ապրում, աշակցում են համայնքում իրականացվող բոլոր ծրագրերին: Վերջերս նրանց ջանքերով վերանորոգվել է հոմենթեմնի ֆուտբոլի եւ բասկետբոլի դաշտերը:

**Պատերազմ:** Երբ սկսվեց պատերազմը, հայկական շրջաններն ավելի ապահով էին: Արվարձաններ կային, որ զինյալները գրավել էին առաջին իսկ օրերից: Հայկական շրջաններում առաջին հրթիռներն ընկան 2012թ. հուլիսի 23-ին: Իսկ սեպտեմբերի 23-ին զինյալներն արդեն հարձակվեցին Նոր գյուղի շրջանի վրա եւ հասան Ազգային ճեմարանի հետեւի թաղամասը: Դաշնակցությունը ստանձնեց հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը եւ, եթե մեր ընկերների այդ մտտեցումը չլիներ, իրենց կյանքի գնով թաղամասի պաշտպանությունը չկազմակերպվեր, հայկական շրջանները եւս կգրավվեին ծայրահեղականների կողմից: 100-200 երիտասարդներ գիշեր-ցերեկ հերթապահում էին թաղամասերում, հայկական շենքերի մոտ՝ չունենալով որեւէ փորձառություն: Կատարված աշխատանքների արդյունքն այն եղավ, որ այս շրջանները մնացին անվաճ, կողոպուտ չիրականացվեց:

Նոր գյուղի վրա հարձակումն իրականացվել է «Սուլթան Մուրադ» խմբակի զխավորությամբ, որն անաբեկչական խմբակ է՝ թուրքական ֆինանսավորմամբ: Քանի որ Նոր գյուղում տեղակայված են հիմնական հայկական շենքերը, դպրոցները, եկեղեցիները, տպարանը, ուստի Թուրքիան նպատակ ուներ ոչնչացնելու հայկական ամենագործավոր գաղութներից մեկը:

Ընդհանուր առմամբ, եթե ամփոփենք մեր այս երկշաբաթյա այցը, պետք է նշենք՝ լավագույն օրերն էին մեզ համար այս տարվա ընթացքում: Պետք է շնորհակալություն հայտնենք պատանեկան միության Ընդհանուր վարիչ մարմնին, Սիրիայի երիտասարդական միության անդամներին, դաստիարակների տարիներ ի վեր դրսևորվող բարձր գիտակցման, սերունդների կրթման ու հայապահպանման գործում ունեցած անգնահատելի ավանդի, պատանիների մոտ ազգային ինքնության բարձրացման եւ ազգային դաստիարակությանն տալու համար: Ընդհանրապես ենք նաեւ պատանիներին, որոնք տվեցին մեզ բազմատեսակ հարցեր հայրենիքի, 44-օրյա պատերազմի, տարածաշրջանում ստեղծված իրավիճակի մասին: Ուրախ ենք, որ հնարավորություն ունեցանք դասախոսություններով հանդես գալ նրանց համար եւ ներկայացնել մեր հայրենիքի ֆիզիկաաշխարհագրական դիրքի, Արցախյան պատերազմների, անկախության կերտման, մշակութային, կրթական բնագավառների մասին: Ուրախ ենք, որ նրանց մեջ հույս արթնացրինք եւ ամրապնդեցինք այն միտքը, որ բոլորս պարտավոր ենք գործել ի շահ մեր հայրենիքի եւ ամեն ինչ անել հայրենիքի փրկության համար: Լիա-հույս ենք նրանց տեսնել Սիրիայի երիտասարդական միության շարքերում: Հուսով ենք, որ ապագայում մեր ընկերները եւս առիթ կունենան ծանոթանալ արցախյան հյուրընկալությանը եւ իրենց աչքերով տեսնել հայրենիքի ամեն մի հուշարձան ու եկեղեցի:

Մենք կամրապնդենք կապերը նրանց հետ բոլոր հարթակներում եւ կշարունակենք համագործակցել հանուն ապագա սերունդների հայեցի կրթման ու դաստիարակման:

### Ծովը միշտ շառաչում է

Նա վազում էր ծովի ափով, եւ նրան փոքր-ինչ ուրախացնում էր, որ իրենից բացի ոչ ոք չկա ափին:

Ծովը հայացքով կանչում էր արեւին, եւ արեւը չէր փորձում ընդդիմանալ. արեւին դուր էր գալիս պարտվել ծովին, որովհետեւ ծովը երբեք նրան կույ չէր տալիս, ծովը միայն գրկում էր նրան, փաղաքշում էր ալիքներով, ջրի կաթիլներ ցողում վառվող դեմքին, իսկ հետո, երբ իջնում էր երեկոն, ծովը նրան թաքցնում էր իր խորունկ խորքերում, որպեսզի լույսը բացվելուն պես նորից ազատություն տա նրան, թողնի, որ տարածի իր շողերը, լողա անսահման ազատության մեջ, իսկ ինքը հետեւի նրան ու գմայլվի, որովհետեւ թեկուզ նա իրենն է, բայց միաժամանակ կարողանում է ջերմացնել ողջ մարդկությանը: Ծովը ծփում էր երջանկությունից...

Նա կանգ առավ, նստեց ծովի ափին եւ առաջին անգամ զգաց, որ մի քիչ նախանձում է ծովի խաղաղությանը: Թախիծը ջանում պես գրկեց մերկ ուտերը, անցավ արծակ մազերի միջով, հետո կանգ առավ թարթիչների վրա այնքան, մինչեւ նա թարթեց աչքերը, եւ արցունքի մի կաթիլ, ասես ծովից պոկված, ցած գլորվեց աչքերից, միացավ ծովի անհունությանը...

Նա զգաց իր ներսի դատարկությունը. այն շատ խորն էր, գուցե ծովից էլ խորը: Ծովը գոնե չափվում է չափման միավորով, իսկ իր ներսի դատարկությունը:

- Կմրսես, ու դրանից ոչինչ չի փոխվի,- ձայնը լավեց շատ մոտ տեղից:

Շրջվեց, ոչ ոք չկար: Նրան մի պահ թվաց՝ ձայնը ծովի խորքերից եկավ, բայց չէ, այն շատ մոտ էր, իր կողքին:

Փակեց աչքերը, այդպես ավելի հանգիստ էր: Այդպես լսում էր ծովի շառաչը, այդպես հիշողությունների շառաչն էլ էր լավ լսում, այդպես գոնե մենակ չէր զգում, այդպես կարողանում էր ինքն իրեն խաբել...

- Ես ինչով լցնեմ սրտիս դատարկությունը, եթե ինչ սիրում էի՝ կորցրի, ինչ փայտայում էի աչքիս լույսի պես՝ փշրվեց աչքիս առաջ,- ասաց ինքն իրեն:

- Դու պետք է կարողանաս ծովը տեղավորել քո ներսում,- լռության մեջ նորից լավեց նույն ձայնը:

- Բայց ինչպե՞ս, այն շատ մեծ է,- ասաց ինքն իրեն, անխոս:

Ու ձայնը պատասխանեց նրա լռությանը.

- Բայց դու երբեւէ մտածե՞լ ես այդ մասին:

- Ոչ:

- Ուրեմն փորձիր ու կտեսնես, որ ներսիդ մակընթացությունն ավելի մեծ է, ներսիդ փոքորիկներն ավելի կործանիչ կարող են լինել, քան ծովիցը: Ըն ներսի ծովի ավելի լայն է ու ավելի խորը, քան աշխարհի որեւէ ծով կամ օվկիանոս: Տեղավորիր ծովի կապույտը քո մեջ եւ կտեսնես, որ ներսիդ այնպիսի դանդաղում է, քիչ-չինչ մեկ-մեկ սուզվում ու տարալուծվում են կապույտում, խաղ բռնում ալիքների հետ, հասնում ամենահեռավոր ափերն ու հետ գալիս՝ իրենց հետ բերելով անհայտ կղզիների գույները: Դու պետք է հասնես այդ հեռավոր կղզիներին, դու պետք է հայտնագործես դրանք,

որովհետեւ դա քեզից բացի ոչ ոք չի արել ու չի անի... Զգա քո ներսի ծովը, այնտեղ ամեն մեկը չի կարող նավարկել, լողալ, իր ուզած ձկները որսալ, խմել իր սիրած խմիչքն ու շիշը նետել այնտեղ, պղտորել ու հեռանալ: Այն միայն քոնն է, եւ դու ես նրա պատասխանատուն:

- Իսկ հնարավոր է իմ ներսի ծովն ինձ խորտակի:

- Չի խորտակի, եթե ճիշտ լողաս, եթե ունենաս քո հորիզոնը եւ լողաս դեպի արեւը:

- Երանի կարողանայի հասնել արեւին:

- Իսկ եթե ասեմ, որ արեւն է՞լ է քո մեջ:

- Ստացվում է՝ երկու՞ արեւ կա:

- Չէ, այդ արեւից ոչ մի տեղ չկա. դա միակն է, եւ այն քո ներսում է:

- Լավ, կփորձեմ փնտրել, թեւէ այնքան էլ լավ չհասկացա...

- Կհասկանաս, եթե փորձես:



Նա խոսում էր անծանոթ մեկի հետ, որին չէր ճանաչում, որին տեսած չկար, որին չէր էլ տեսնում, որը գուցե երգ էր, ցնորք: Բայց ձայնը շարունակում էր խոսել, եւ նա ուզում էր, որ այն խոսի երկար, որովհետեւ այդպես դեռ ոչ ոք իր հետ չէր խոսել: Բայց ինչո՞ւ նա չի երեւում, ինչո՞ւ չի կարող տեսնել նրան:

- Զգիտեմ ով ես, բայց ուզում եմ, որ չլռես:

- Կե՛ր կաց,- պարտադրեց ձայնը,- դու երբեւէ մտածե՞լ ես, թե ինչքան բան կա, որ պետք է գտնեիր, բայց չգտար, ինչքան բան կա, որ աչքերիցդ թաքցնում էր պահված ու դու չտեսար, ինչքան բան կա, որ հենց աչքիդ առաջ էր, բայց դու չուզեցիր նկատել, այնքա՛ն բան կա գտնելու: Հիմա, երբ քեզ թվում է, թե ոչինչ չունես, ես քեզ ասում եմ՝ փնտրիր այն, ինչ թաքցված է քո ներսի ջրերում եւ քո աչքերից անդին:

- Դու շատ բարդ ես խոսում: Բայց ես ի՞նչ պիտի գտնեմ, եւ ի՞նչ իմանամ, որ գտել եմ:

- Լողա քո ներսի ջրերում, եւ կտեսնես, որ այնտեղ խոսող ձկնիկներ կան, ջրահարսներ կան այնտեղ եւ մարգարիտներ՝ իսկական ու եզակի, խեցիներ կան

այնտեղ, որոնք եթե ականջիդ պահես՝ կլսես Աստծո ձայնն ու աղոթքները: Ոչ մի ձկնորս չկա այնտեղ, ոչ ոք քեզ չի խանգարի: Լողա, ու երբ հոգնես ձեռքերդ, դուրս ել մի պահ, հագիր ամենապարզ հագուստներդ, բացիր քո ներսի դուռը, քեզ թող այնտեղ՝ ներսումդ, թափառիր առանց քեզ, աչքերդ լայն բացած, ու դու կտեսնես, թե ինչպես է մարդը տառապում աշխարհի վրա, ինչպես է անօգուտ վազքի մեջ վատնում իր կյանքը: Նա վազում է ամեն օր, վազում է ընչաքաղցության, սնափառության, անօգուտ գինարբուքների եւ տարբեր վայելքների հետեւից, նա ամեն օր վատնում է իր ունեցածը, թեւէ նրան թվում է, թե հարուստ է, կարող ու հզոր: Նա հիվանդ է ավելի, քան նա, ով այսօր մահացավ անբուժելի հիվանդությունից, քան նա, ում աչքերը մարում են խոսակցության, խավարի, սովի ու մեղսության մեջ: Նայիր քեզ վերջիններիս աչքերով, եւ կտեսնես, որ ձեռքերդ կպարզվեն դեպի նրանք, դու կտես նրանց այն, ինչ ունես, կբաժանես քո ներսի ջերմությունը եւ այդժամ կհասկանաս, որ ջերմությունը չի սպառվում, որ դու չես դատարկվում, որ ջերմությունը քո ներսում է, քո ներսից է հորդում...

- Բայց ես հասարակ մահկանացու եմ:

- Բոլորն են այդպիսին:

- Ես չափից շատ եմ ուժասպառ, իմ վիշտն այնքան մեծ է: Ի՞նչ անեմ վշտիս հետ:

- Փաթաթիր այն գեղեցիկ հիշողություններով, ուրիշ բանով դու այն կապել չես կարող, տնկիր այն պարզ երկնքի տակ, ջրի ու խնամիր բարության լույսով, ջրի ամեն օր, անընդհատ, եւ կտեսնես, որ տառապանքդ բողբոջում է, ծաղկում: Երբ կզգաս այդ ծաղիկների բույրը, կհասկանաս, որ արեւը քո ներսում է, քո ներսում...

...Արեւը նորից խաղ էր բռնել ծովի հետ, ալիքները չարածի երեխայի պես քաշում էին արեւի արծակ վարսերից ու փախչում, նորից էին քաշում, նորից փախչում: Իսկ արեւը չէր բողբոջում դրանից, շարունակում էր շաղ տալ շողերը եւ սեթեւեթել:

Նա երկար քայլեց ծովի ափով, քայլեց առանց հետ նայելու՝ մայրամուտի գույների մեջ փաթաթված: Նա զգաց, որ անծանոթ ձայնը հետեւում է իրեն, ավելի ծիծաղ՝ քայլում է իր հետ: Նա զգաց, որ այդպես ավելի լավ է, այդպես մենակ չէ:

- Ուզում եմ տեսնել քեզ,- ասաց ինքն իրեն: Պատասխան չեղավ:

- Զեք հետ թեթեւ է քայլելը, ուզում եմ, որ չհեռանաս, կարո՞ղ ես ընկերներդ դառնալ:

- Մենք միշտ էլ ընկերներ ենք եղել, պարզապես դու ինձ չես նկատել:

- Բայց... Ասա, որտե՞ղ էիր դու եւ որտե՞ղ ես հիմա... Պատասխանը ուշացավ, բայց դրա փոխարեն սիրտը ուժգին բաբախեց: Նա զգաց իր ներսի շառաչը, զգաց իր ներսի ալիքների խաղը, զգաց, որ ձայնը ներսից է գալիս...

Յերմինե ԱՎԱԳՅԱՆ

### ԱՅ կառավարությունն անտեսեց Հայ Առաքելական Եկեղեցու դիմումը

ԱՅ կառավարությունը դեկտեմբերի 8-ին հավանություն է տվել «Արցախի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին, որը ընդօրինակումն է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված տոների եւ հիշատակի օրերի օրինագծին:

ԱՅ կառավարության որոշումն ուղարկվել է ԱՅ Ազգային ժողով՝ քննարկման համար: Ըստ ներկայացված նախագծի՝ 2022 թվականից Ամանորն ու Շննդյան տոները՝ դեկտեմբերի 31-ից մինչեւ հունվարի 2-ը ներառյալ եւ հունվարի 6-ը նշվելու են որպես ոչ աշխատանքային օրեր: Աշխատանքային շաբաթն էլ սկսվելու է հունվարի 3-ին:

Արցախի կառավարության ընդօրինակած օրենքով ԱՅ կառավարությունը տուրք է տվել Հայաստանի ապագային կառավարության վարքագծին՝ ընդդեմ Հայ առաքելական Եկեղեցու եւ ազգային արժեքների: ՀՀ-ում օրենքի ընդունման նախօրեին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրավիրված Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը դիմել էր ՀՀ Ազգային ժողովին՝ Ամանորի ու Սուրբ Շննդյան տոների ոչ աշխատանքային օրեր պահպանելու նաեւ հունվարի 5-ը՝ որպես



Սուրբ Շննդյան ճրագալույցի տոնական օր, եւ հունվարի 7-ը՝ որպես Մեռելոց հիշատակի օր, հատկապես, երբ Արցախյան պատերազմի զոհերի ցավը դեռ մորմոքում է մեր ժողովրդի սրտում: Ստեփանակերտի Աստվածամոր Սուրբ Հովանի մայր տաճարի հոգեւոր հովիվ Տեր Ներսես քահանա Ասրյանն իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է խորհրդին: «Անկեղծ ասած՝ հույս ունեի, որ գոնե Արցախում նման որոշում չի ընդունվի:



Բայց սխալվեցի: Հիմա խորհրդարանն իր խոսքը պիտի ասի: Էլի հույս ունեմ: Հիշեցման կարգով նաեւ մեջբերեմ ՀԱԵ Հայաստանյան եպիսկոպոսների եւ թեմակալ առաջնորդների դիմումը ՀՀ ԱԺ-ին՝ այս հարցով (թերեւս արդեն կարող ենք սա համարել նաեւ դիմում ԱՅ ԱԺ-ին): «Կարեւորում ենք պետական տոնակալություն ազգային, հոգեւոր ու պետական տոների եւ հիշատակի օրերի պատշաճ ներկայացվածությունը, քանզի մեր հոգեւոր ու մշակութային ար-

ժեքները, ազգային դիմագիծն ու ձգտումներն արտահայտվում են նաեւ տոների եւ հիշատակի օրերի խորհուրդներում:

Հատկանշական է, որ շատ երկրներում, որոնց թվում՝ Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռումինիան, Լեհաստանը, Լիտվան եւ հարեւան Վրաստանը, պետական ոչ աշխատանքային օրերի գերակշռող մասը (60-80%)՝ եկեղեցական տոներ են: Մինչդեռ քրիստոնեությունն իբրեւ պետական կրոն առաջին ընդունած Հայաստանում միայն 19%-ն է եկեղեցական:

Այսու, դիմում ենք Ազգային ժողովի խմբակցություններին՝ Ամանորի ու Սուրբ Շննդյան տոների ոչ աշխատանքային օրեր պահպանելու նաեւ հունվարի 5-ը՝ որպես Սուրբ Շննդյան ճրագալույցի տոնական օր, եւ հունվարի 7-ը՝ որպես Մեռելոց հիշատակի օր, հատկապես, երբ Արցախյան պատերազմի զոհերի ցավը դեռ մորմոքում է մեր ժողովրդի սրտում: Լիառույս ենք, որ ընդառաջ մեր ժողովրդի բարեպաշտ զգացումներին եւ աղոթքի ու մխիթարության հոգեւոր կարիքներին՝ Ազգային ժողովի կողմից նկատի կառնվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սույն առաջարկը,- նշել է Տեր Ներսեսը: